



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

613.6
R-91

Քժ. Ա. Բուդոլդեան.

11759



ՆՈՒԷՐ
ՀԱՅ
ԴՊՐՈՑԱԿԱՆԻՆ

Ս.-ՊԵՏԵՐԱՊՈՒՐԳ.
«ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1906

11.03.2013

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՐԱՏ. ՏԻՎ. ԶԱՐԵԼԻ

1. Գարը երգում է	10 4.
2. Ճշմարիտ մեծութիւն	7 "
3. Արդար ծերունիք	10 "
4. Մեծ տուն	10 "
5. Նոր լոյս	10 "
6. Ուսման սերը	7 "
7. Մանկան ծոռ և վերջին խօսք	7 "
8. Չքնաղ Մարօն	5 "
9. Մաթեօ Զալիօնէ (Լրտես)	7 "

ԴիՄԵԼ՝ Թիֆլիս Կենդրոնական և Գուտտնմբերդ գրախանութներին.

Բացուած է բաժանորդագրութիւն

Հ Ա Ս Կ Ե Ր

Մանկական պատկերազարդ ամսագրի.

Գինը 4 ռ.

1906 թ: Հասցէն՝ Թիֆլիս Բէկրութեան փողոց

№ 25

Խմբ. Հրատ. Կատ. ԼԻՍԻՅԵԱՆ

«Ստ. Լիսիցեան և ընկ» Հրատարակչական ընկերութիւն

(Օտարազգի Հեղինակներ)

Առաջին վեցհատորեակի մէջ մտնելու են յայտնի եւրոպական հեղինակների աշխատութիւնները: Իւրաքանչիւր հատորը կկազմի մ.ծաղիւր գիրք: Վեցհատորեակի գինը Թիֆլիսում 6 ռ. ճանապարհածախսով 7 ռ: Կարելի է վճարել մաս-մաս, մէկ-մէկ բուրբիլ: Արդէն լոյս են տեսել Բոռ Վոյնիչի և Մի զիւղացու պատմութիւն Երկման-Շաարիանի Գիմել «Հասկերի» խմբագրութեանը:

513.6
P-91 44.

1459

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

29 JUL 2010



ՆՈՒԷՐ ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆԻՆ

Առողջապահական կանոններ աշակերտուհիների և աշակերտների համար:

1808
37129

3993

Մեր օրերը, Հոկտեմբերի տասնութի մանիֆեստը, Խօստացած աղատութիւնները, Ընդհանուր ընտրողական իրաւունքը, Գատարան, Մեր գպրոցների բացումը, Պէտք է զօրեղ լինել, Փոքրիկ առողջապահական կանոններ, Միութիւն:



Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ
ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1906





„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ пер. 4.





Յանուս Մարգկութեան և Հայրենիքի.

ՀՐԵՏ. ԲՃ. Ը. ԵՈՒԴՈՒՂ. ԼՍՆԻ

Մ Ե Ր Օ Ր Ե Ր Ը.

Որպէսզի մենք բոլորս էլ հանգիստ ու լաւ ապրենք, զրա համար անհրաժեշտ է նախ, որ կարգին ապրուստ ունենան բանւորն ու գիւղացի հողագործը. չէ՞ որ նրանք են մեզ կերակրողը, ամենաշատ հարկը նրանցից է մտնում պետական գանձարանը:

Եթէ բանւորն ու գիւղացին բարւոք զրութիւն ունենան, այդ լաւ է և ամբողջ պէտութեան համար:

Բայց երբ ոմանք անհաշիւ հողերի, տների, փողի տէր են, իսկ ոմանց՝ առաւօտից մինչև երեկոյ արիւն քրտինք թափող աշխատաւորների ետեք մահուան սև հրեշտակի նման քաղցն ու չքաւորութիւնն են կանգնած, այդ դէպքում կենանքը քաղցը է միայն մի խումբ մարդկանց համար:

Մի՞թէ սրա մէջ արդարութիւն կայ:

Ո՛չ, այդպէս չպէտք է լինի: Մխարում են և նրանք, որոնք կարծում են թէ բաւական է հէնց հաւաքուել, հարուստների վրայ յարձակուել, աւերել կայրւածները, կործանել կամ այրել շինութիւններն ու այդպիսով աղքատացնելով հարուստներին,

չունեորները կհարստանան և իրանց վիճակը կբարւոքեն:

Բայց ի՞նչ դուրս կգայ սրանից:

Այո՛, միայն այն ժամանակ լաւ կլինի, երբ գործը խելացի կերպով ու իմաստութեամբ է կատարուած. իսկ կողոպուտը՝ քամու պէս եկածի նման էլ կերթայ:

Երբ մարդ որեւէ բան օրինաւոր ճանապարհով է ձեռք բերել, կարիք չունի ուրիշներից թաղցնելու, իսկ երբ գողութեան կամ յափշտակութեան է դիմել, նրա խիղճը չի կարող հանգիստ լինել և պիտի վախենայ օրէնքի առաջ պատասխան տալուց. դրա համար էլ չքաւորութիւնից ազատուելու համար ոչ թէ կողոպուտի պիտի դիմել, այլ արդար օրէնքների:

Որպէսզի օրէնքներն արդար լինեն և կեանքը կանոնաւոր, հարկաւոր է, որ այդ օրէնքների սահմանումն ու նրա վրայ հսկելը յանձնուած լինի՝ զիւղացիների, բանւորների և ռուսահպատակութիւն ունեցող բոլոր խաւերի ընտրեալներին—անարատ ու ազնիւ մարդկանց:

Եւ ահա 1905 թւի հոկտեմբերի 17-ի կայսերական հռչակաւոր մանիֆեստը յայտարարում է ժողովրդին, որ օրէնքներ մշակելու և հսկելու համար այն բոլորի վրայ ինչ որ կատարուած է ռուսաստանում պէտք է հրաւիրուի պետական դումա, ազգաբնակչութեան բոլոր խաւերի ներկայացուցիչներից. թէ հարուստներից և թէ աղքատներից, թէ տէրերից և թէ զիւղացիներից ու բանւորներից:

Բայց որպէսզի ստիկանութիւնն ու միւս իշխանութիւնները, որոնց համար թերեւս ցանկալի չեն նոր կարգերը, այլ կուզենային որ հին կարգերը մնան,—չխանգարեն ժողովրդին ընտրելու ուժ ուղում է, մանիֆեստը յայտարարում է, որ նախապէս բոլորի համար պէտք է լինի անձնաւորութեան անձեռնմխելիութիւն... և խղճի, բանաւոր ու գրաւոր խօսքի, համաժողովների և դաշնակցութիւնների ազատութիւն:

Թերեւս բոլորի համար պարզ չէ, թէ ի՞նչ են նշանակում այդ ազատութիւնները. աշխատենք բացատրել. «Սև հարիւրեակը» ազատութիւն ասելով հասկանում է մի իրաւունք, որ՝ ինչ ուղէս, կարող ես անել՝ կողոպտել, սպանել, ծաղրի ենթարկել անպաշտպան կանանց ու երեխաներին, բայց սա մի վայրենի ազատութիւն է և խուլիգանների կամայականութիւն և ոչ թէ քաղաքացիական ազատութիւն:

Քաղաքացիական ազատութիւն ասելով հասկացում է քաղաքացու իրաւունքը—անել այն ինչ որ չի վնասում ուրիշին: Քաղաքացիական ազատութիւնը զլխաւորապէս այնտեղ է զարգանում, ուր քաղաքական ազատութիւն կայ: Այդ երկու հասկացողութիւնները սերտ կապուած են իրար հետ և կախումն ունին միմիանցից:

Քաղաքական ազատութիւնը այն իրաւունքն է, որ ունի քաղաքացին,—մասնակցելու երկրի կառավարութեան գործում իւր—ազատ ընտրուած պատգամաւոր—ներկայացուցիչների միջոցով: Երբ ժողովուրդը մասնակցում է պետական

հաստատութիւնների կազմակերպութեան, երբ նա իրաւունք ունի ինքն օրէնքներ սահմանելու, յարմարացնելով իւր կարիքներին ու պահանջներին, երբ նա ինքն է որոշում իր ընդհանուր կարգերն ու պետական կեանքի ողջ ուղղութիւնը—այդ նշանակում է, որ նա քաղաքական ազատութիւն ունի:

Բայց պետական կառավարութեան մէջ մասնակցութիւն ունենալով և միաժամանակ չաչանի զոհեր բերելով այդ պետութեան (հարկերը, զինուորական ծառայութիւնը և այլն), քաղաքացիք միայն քաղաքական ազատութեամբ չեն կարող բաւականանալ:

Իւրաքանչիւր անհատ իւր անձնական պահանջներն ունի. օրինակ՝ անձնական հաւատ, գիտութիւն և այլն: Իրան ազատ զգալու համար մարդրս իրաւունք էլ պէտք է ունենայ կեանքի մէջ իրականացնելու իւր այդ պահանջներն ու շահերը:

Կառավարութիւնն իրաւունք չունի խախտելու քաղաքացիների այդ ազատութիւնը. նա նոյնքան անհրաժեշտ է, որքան ուտելու և քնելու իրաւունքը: Բայց քաղաքացիներին մի այսպիսի ազատութիւն տալու համար կառավարութիւնը պէտք է սահմանափակի իւր իշխանութիւնը: Նէնց իշխանութեան իրաւունքի այս տեսակ սահմանափակումն էլ, կազմում է քաղաքացիական ազատութեան հիմքը:

Քաղաքացիական ազատութիւնը ապահովւած պէտք է լինի ստոյգ, բացառապէս օրէնքներով:

Իշխանութեան իրաւունքների սահմանափակումը յօգուտ քաղաքացիների ազատութեան,—կազմում է սահմանադրութիւնը:

Այն բոլոր պետութիւնները, որոնք ժամանակին իրանց ժողովրդին քաղաքական և քաղաքացիական ազատութիւն են տուել, աւելի ևս ուժեղացել և զօրացել են. օր. ձապոնեան:

Իսկ Չինաստանը, օրինակ, և մանաւանդ Թիւրքիան, մինչև այժմ էլ զուրկ են այդ կարգերից, դրա համար էլ նոցա զօրութիւնը սաստիկ ընկել է և իրանք բոլորովին քայքայւում են:

Ամեն մի պետութիւն ազատ պէտք է զարգանայ, չառաջադիմի,—իսկ այդ միայն այն ժամանակ հնարաւոր է, երբ այնտեղ քաղաքական և քաղաքացիական ազատութիւն կայ, երբ իւրաքանչիւրը կարող է ազատ իւր լուծան տալ յօգուտ ընդհանուրի, իւր ուժերի և կարողութեան չափ:

Այն իշխանութիւնը, որը սահմանափակում է իւր իրաւունքները յօգուտ ուրիշների բարօրութեան և պաշտպանում է քաղաքացիների ազատութիւնը, աւելի սակաւ ծանրալուծ է և առաւել արդարացի: Այդպիսի իշխանութեանն էլ աւելի սիրով են հնազանդւում:

Այդպիսով իշխանութեան իրաւունքների սահմանափակումը նրա բարձրացման ամենալաւ զրաւականն է:

Ամեն մարդ ազատութեան կարիք ունի, և մեզ թւում է, որ իւրաքանչիւրը իրաւունքի մէջ

ազատութիւն պէտք է որոնի և ազատութեան մէջ
— հաւասարութիւն:

I. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶՍՏՈՒԹԻՒՆ.

Անձնական ազատութիւնն ու անձեռնմխելի-
ութիւնը կայանում է նրանում, որ ստիկանու-
թիւնը իրաւունք չունի ոչ մի մարդու կայանաւո-
րելու առանց դատի և քննութեան:

Իհարկէ առանց կայանաւորելու առաջժմ շատ
դէպքերում համարեա անկարելի է վարուել. օրի-
նակ անկարելի է չկայանաւորել մէկին, որը նկատ-
ւել է յանցանք գործելիս: Բոլոր այդպիսի դէպքե-
րում թողաւորում է և առանց դատական իշխա-
նութեան կարգադրութեան, կայանաւորումն, կամ
այսպէս կոչուած ստիկանական ձերբակալումն:

Բայց որպէսզի ստիկանական ձերբակալումը
ազատութեան կատարեալ կամայական զրկումն
չդառնայ, պէտք է, որ կայանաւորումը իսկոյն դա-
տական դառնայ, կամ իսկոյն ընդհատուի:

Ինքնիշխան և կամայական կայանաւորումնե-
րի դէմ շատ երկրներում եղել են պահանջներ, երբեմն
քաղաքացիք այդ իրաւունքը պաշտպանել են՝ դէն-
քը ձեռքին, օրինակ Անգլիայում և այդ յաջողուել
է նրանց:

1215 թուականին արդէն մենք հրամանագրու-
թիւն ենք գտնում Անգլիայում, որով ոչ մի ազատ
մարդ առանց դատի, բանտարկութեան չպէտք է

ենթարկուի: Կամայական բանտարկութիւններից
պաշտպանուելու համար Անգլիական օրէնքը բան-
տարկեալին իրաւունք է տալիս Habeas corpus
(քեզ դատի տակ դիր) դատարանին դիմելու:

Habeas corpus-ի մասին, այդ հրահանգը պահան-
ջում է իշխանութիւնից յայտնել բանտարկութեան
առիթն ու ժամանակը. իսկ առանց դատի, հետե-
ւապէս և առանց առիթի, չէր կարելի մարդուն զր-
կել ազատութիւնից: Ապագայում այդ իրաւունքը
աւելի ևս ընդարձակուեց:

Ապօրինի կերպով կայանաւորող անձը ծոնը
տուղանքների է ենթարկւում. դրա շնորհիւ էլ ս-
տիկանական կամայական բանտարկումները արժա-
տախիլ եղան:

Անգլիայում ապօրինի կայանաւորման համար
ում ասես պատասխանատուութեան կարելի է են-
թարկել. միևնոյն է մինիստր է նա, նահանգա-
պետ, թէ ինչ. բոլոր քաղաքացիք հաւասար են օ-
րէնքի առաջ:

Փրանսիայում անձնական ազատութիւնը յայ-
տարարւեց Փրանսիական մեծ յեղափոխութեան
օրով 1789թուին:

Եւ ահա Փրանսիական քաղաքացիք յայտա-
րարեցին հետեւելը. «Ոչ ոք չի կարող մեղադրուել,
կայանաւորուել, կամ բանտարկուել բացի այն դէպ-
քերից, որոնք օրէնքի մէջ նախատեսուած և որոշ
ձևով սահմանուած են:

Իւրաքանչիւրի դործը, որ կայանաւորուել և
ստիկանութեան ներկայացուցչի մօտ է բերուել,

պէտք է անմիջապէս քննուի, կամ ամենաուշը 24 ժամուան ընթացքում:

Կասկած չկայ, որ այդ բոլորը կեանքի մէջ իրականացնելը կոխուած է հասարակութեան շիտակութիւնից և իւր շահերը պաշտպանելու ընդունակութիւնից:

Որպէսզի անձնաւորութիւնը կատարելապէս անձեռնմխելի լինի, անհրաժեշտ են հետևեալ օրէնքները:

Առաջին՝ կալանաւորողները պատասխանատու պէտք է լինեն դատարանի առաջ իրենց սպօրինի գործողութեանց համար. երկրորդ՝ սպօրինի բանտարկութեան դէպքում քաղաքացիք իրաւունք պիտի ունենան կառավարութիւնից բաւարարութիւն պահանջելու և երրորդ՝ պէտք է պայմանաժամ որոշել, այսինքն ճորջան ժամանակ կարելի է կալանաւորին առանց դատի պահել, — և այս բոլորը կապահովեն անձի անձեռնմխելիութիւնը:

Անձնական ազատութեան հետ կապուած է և մասնաւոր բնակարանի անձեռնմխելիութիւնը:

Մարդ այն ժամանակ միայն իրան ազատ և անձեռնմխելի կզգայ, երբ հաւատացած է, որ կառավարութեան ազենաները (գործակալները) չեն խուժի իր տունը, առանց դատի և քննութեան:

Ազատ չէ մարդ, երբ իր տանը իրան կատարեալ տէր չի կարող համարել. զրա համար էլ բոլոր սահմանադրական պետութիւններում ոչ ոք առանց դատի իրաւունք չունի մասնաւոր տները խուժել և խուզարկութիւններ կատարել:

«Իմ տունը սրբավայր է». հպարտութեամբ ասում է անպիացին, նոյնը կարող է ասել և ամեն մի քաղաքացի սահմանադրական պետութեան մէջ:

Ընդհանրապէս նշանաւոր անձի և բնակարանի անձեռնմխելիութիւնը մի առանձին իրաւունք չէ, այլ միմիայն ոստիկանական իշխանութեան կամայականութիւնների և զեղծումների սահմանափակումն:

Անձնական ազատութեանն է վերաբերում և տեղափոխութեան ազատութիւնը, այսինքն իւրաքանչիւր քաղաքացի իրաւունք պէտք է ունենայ առանց որեւէ կանխակալ թույլտուութեան մեկնել արտասահման կամ այլ տեղեր:

Մեր մօտ մինչև այժմ տեղափոխութեան ազատութեան արգելք են լինում անցադրերը, առանց որի ոչ ոք մեկնել չի կարող: Մինչդեռ անցադրեր ձեռք բերելու ժամանակ չաճախ զանազան առիթներ պատրուակներ և անախօրժութիւններ են պատահում, մանաւանդ չունեւոր մարդկանց համար:

Արտասահմանում մարդիկ առանց անցադրի են ապրում, զրանից ոչ մի քաղաքացի չի տուժում, ընդհակառակը կարգն ու շիտակութիւնը այնտեղ աւելի է:

Ասում են, իբր թէ անցադրի շնորհիւ հեշտ է չանցաւորներին գտնելը, բայց դա երկտ չէ. արտասահմանում ոստիկանութիւնը չանցաւորին աւելի հեշտ է գտնում, քան մեզ մօտ. իսկ անցադիրը զեռ.

օղնում էլ է յանցաւորին խուսափելու, եթէ նա մի ուրիշի անցագիր ունի:

Մարդու համար առանց անցագրի որեւէ տեղ մեկնելու անկարելիութիւնը նորտատիրական ժամանակների մնացորդ է, և այդ տեսակ ստորացուցիչ կարգը պէտք է վերացուի:

II. ՄԱՄՈՒԼԻ ԱԶՍՏՈՒԹԻԻՆ.

Ազատ է մամուլը, երբ քաղաքացիք իրաւունք ունեն մամուլի մէջ ազատ արտայայտել իրանց մտքերն ու իղծերը, առանց կառավարութեան թույլտուութիւնն ու համաձայնութիւնը ստանալու:

Երբ մամուլն ազատ է, այն ժամանակ իւրաքանչիւրը կարող է քննադատել կառավարութեան գործողութիւններն ու օրէնքները, թէ արդեօք նրանք օգտակար են, թէ վնասակար:

Մամուլի ազատութեան ժամանակ կարելի է մասնացոյց անել այս կամ այն բարձր անձնաւորութեան զեղծումները, օրինակ՝ մինիստրների, նահանգապետների և այլն:

Այդ բոլոր դէպքերում զրպարտութիւն զրոյր դատի է ենթարկուում, բայց ոչ թէ վարչական-օստիկանական, այլ ազատ երգուեայ ատէնականների դատարանին:

Այն պետութիւններում, ուր մամուլի ազատութիւն չկայ, այնտեղ բոլոր զրքերը, թերթերն ու լրագրները՝ լոյս տեսնելուց առաջ, ներկայացուում են առանձին չինովնիկների—զրաքննիչների

նօքա աչքի են անցնում այդ բոլոր զրքերն ու թերթերը և որոնում են, թէ արդեօք նրանց մէջ որեւէ «վտանգաւոր բան» չկայ կառավարութեան կամ բարձր անձանց դէմ. զրաքննութիւնը խիստ է մանաւանդ փոքրիկ զրքոյկների վերաբերմամբ և շնչում է նրանց մէջ անխնայ ինչ որ կենդանի է, ինչ որ արդար է, մանաւանդ երբ խօսքը կառավարութեան կամ ժողովրդին է վերաբերում:

Այդ ժամանակ նօքա (զրաքննիչները) արգելում են այդպիսի զրքերն ու թերթերն, իսկ հեղինակներն ու հրատարակիչները խիստ պատիժների են ենթարկուում, առանց որեւէ դատաստանի, այլ միայն մինիստրների հայեցողութեամբ:

Վաղուց ի վեր զրաքննութեան ճնշումների դէմ խուլ կռիւ էր մղում, որը չամառ էր և երկար:

Մամուլի ազատութիւնը մարդիկ նուաճել են զլիւսաւորապէս չեղափոխութիւնների ժամանակ, երբ ժողովրդի միահամուռ ճնշման տակ, կեանքը վերաշինուեց նոր հիմքերի—ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան վրայ:

Փրանսիացիք առաջին անգամ ազատութիւն մեռք բերին 1789 թուականի չեղափոխութեան ժամանակ: Ժողովրդի չաղթութիւնից չետոյ յօրինուեց «Մարդու և քաղաքացու իրաւունքների դեկլարացիան (հրապարակական չաչտարարութիւնը)». նրա մէջ բացատրուած էր, թէ ինչո՞ւմ է կայանում քաղաքացիների ազատութիւնն ու հաւասարութիւնը:

Մամուլի մասին այդ դեկլարացիայի մէջ առաւած է. — «Համոզմունքների և մտքերի հաղորդակցումը մարդու ամենաթանկագին իրաւունքն է, դրա համար էլ քաղաքացին բոլորովին ազատ կարող է գրել, տպագրել, միայն դատարանի առաջ պատասխանատու լինելու պայմանով»:

Ներկայումս մամուլը գրեթէ արեւմտեան բոլոր պետութիւններում կատարեալ ազատութիւն է վայելում: Բոլոր յանցանքները երգուելանքի դատարանն է քննում: Ճշմարիտ է, ներկայումս էլ այնտեղ մի քանի սահմանափակումներ կան, օրինակ թատրոնական գրաքննութիւնը, բայց դրանց հետ վարուելը շատ հեշտ է:

Ռուսաստանում մինչև այժմ մամուլի ազատութիւն չի եղել, մեզ մօտ գոյութիւն ունէր գրաքննութեան բոլոր ձևերը, սովորական էին բանտ նստացնելը, աուզանքներն, ու առանց դատի պատիժները: Տուժում էին մանաւանդ նրանք, որոնք ժողովրդի չքաւորութեան, նրա իրաւունքների և ճշմարտութեան մասին էին խօսում. օրինակ չէր կարելի գրել գիւղերի սովերի մասին, և լրագրների միջոցով չօգուտ սովեալների նպաստ ժողովել, չէր կարելի բանւորական հարցի մասին գրել, այսինքն բանւորի չարքաշ գրութեան, բանւորական օրը կրճատելու մասին: Ձեր կարելի գրել գիւնւորների գրութեան, կաշառքի, մանաւանդ բարձր անձանց կաշառակերութեան մասին:

Այդ արգելումները երբեմն ծիծաղի էին հասնում. օրինակ՝ մի ժամանակ կարգադրութիւն էր

եղել, որ ոչ ոք իրաւունք չունի սուլթանի կտանեց մասին որևէ ծիծաղելի բան գրելու:

Նոկտեմբերի 17-ի մանիֆեստը խօսքի ազատութիւն է յայտարարում, հասարակութիւնը ենթադրում է, որ դա և մամուլին է վերաբերում:

Որ պետութեան և ժողովրդի կարիքները բացատրելու համար, մամուլի ազատութիւնը անհրաժեշտ է, — դա ճշմարտութիւն է, ուրեմն և պէտք է վերացնել գրաքննութեան բոլոր ձևերը, որպէս զի լուսաւորութեան գործը չ'ենշուէ: Իւրաքանչիւրը իրաւունք պէտք է ունենայ հրատարակելութիւթեր, գրքեր, լրագրներ, զանազան թերթիկներ թէ ծախելու և թէ տարածելու համար:

Գրախանութները պէտք է ինչպէս հարկն է այնպէս բացուեն, այսինքն բացման մասին պէտք է միայն յայտնել ոստիկանութեան, և ոչ թէ դրա համար առանձին թոյլտուութիւն խնդրել. և ընդհանրապէս մամուլը միայն դատարանի առաջ պէտք է պատասխանատու լինի: Վերջապէս բոլոր լոյս տեսնող գրքերը պէտք է թոյլ տրուեն առանց որևէ արգելքի բոլոր գրագարան-ընթերցարաններում:

Ահա այսպիսի պահանջներ պէտք է լինեն մամուլի վերաբերեալ: Միայն այս տեսակ ազատութեան ժամանակ կարելի է լուսաւորել մեր կեանքի մութ կողմերը, երևան հանել զեղծումները և բարելաւել ժողովրդի ու ամբողջ պետական կեանքը:

III. ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱԶՍՏՈՒԹԻՒՆ.

Համաժողովները ազատ պէտք է լինեն: Քաղաքացիք իրաւունք պէտք է ունենան ազատ հաւաքւելու, իրանց կարիքների մասին խօսելու, առաջիկայ ընտրութիւնների մասին խորհրդակցելու և այլն: Պէտք է ազատութիւն լինի հաւաքւելու ուր ուզում են և ինչպէս ցանկանում են, առանց սահմանափակելու ժողովականների քանակը, առանց հասակի և սեռի խտրութեան:

Մեռահասների համար այդ ժողովրդական համաժողովներ չաճախելը օգտակար է, որովհետև այնտեղ նոքա հետաքրքիր և ճշմարիտ շատ բան կը լսեն, այդպիսով նոքա կարող են աստիճանաբար նախապատրաստուել, սգաւկար և զիտակից քաղաքացիներ լինելու իրենց հայրենիքի համար:

Համաժողովներ ամեն տեղ պէտք է թոյլ տրուին, թէ բնակարաններում և թէ բացօդեայ: Բայց, վերջին, բացօդեայ համաժողովները մի քանի պետութիւններում չաճախ արգելում են: Դա ամենից շատ չունեւոր և բանւոր մարդկանց է վնասում, որովհետև նրանց համար ամեն անգամ դժուար է ժողովների համար բնակարան վարձել:

Որպէսզի չունեւորները համաժողովներ կազմելու յարմարութիւն ունենան, հասարակական հիմնարկութիւնները՝ օր. ուսումնարանները, զիմնազիօնները և այլն, ազատ ժամանակ այդ տեսակ ժողովների տրամադրութեան տակ պէտք է լինին:

Ժողովները պէտք է կազմակերպւին առանց

ոստիկանութեան և ժանդարմական վարչութեան թոյլաութիւնը ձեռք բերելու և առանց նրանց միջամտութեան: Ժողովն ինքը նախագահ և օգնականներ է ընտրում որոնք և պահպանում են կարգը:

Իշխանութիւնը ներկայ չպէտք է լինի ժողովներին. նա խանգարում է ժողովականներին անկախ և անկեղծօրէն արտայայտելու իրանց մտքերը:

Եւրոպական բոլոր պետութիւններից, անդրիւն է ամենից շատ օգտոււմ համաժողովների ազատութիւնից: Այնտեղ ոստիկանութեան կողմից ոչ մի չափաւարութիւն կամ ժանտեցումն չի պահանջւում: Այնտեղ ամեն մի մարդ իրաւունք ունի դիմելու հասարակութեան իր ճառով, հրապարակի վրայ կամ զբօսարանում, և ոչ ոք իրաւունք չունի ցրելու նրանց, եթէ ամբօխ իրան հանդիստ է պահում:

Անդրիւնում շատ չաճախ են լինում հրապարակական ժողովներ ու համագումարներ և ազատ, ոստիկանութիւնը առանց միջամտելու միայն արտաքին կարգն է պահպանում, ինչպէս օրինակ մեր մօտ հանդիսաւոր յուղարկաւորութեան ժամանակ:

Հոկտ. 17-ի մանիֆեստը մեր մօտ թոյլատրում է զոնէ թղթի վրայ, այդ տեսակ ժողովները, բայց պէտք է ասել, որ այդ բոլորը արդէն չես է խըլւում... բայց արդեօք երկա՞ր ժամանակով... Հասկանալի է որ վերադարձնելը արդէն ժողովրդի զործն է:

37/29



IV. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.


Դաշնակցութիւնները ծշտական բնաւորութիւն ունեն և որոշ նպատակների համար են կազմակերպւում, օրինակ բոլոր անդամների տնտեսական և իրաւային զրութիւնը բարւոքելու համար: Ոստիկանական պետութիւններում այդ տեսակ դաշնակցութիւնները չեն թույլատրւում և այնտեղ նոքա զաղտնի ընկերութիւնների բնաւորութիւն են կրում:

Սահմանադրական պետութիւններում, ճիշտ է դաշնակցութիւնների ազատութիւն է յայտարարւում, բայց չաճախ դա միայն թղթի վրայ է մընում և չի իրագործւում:

Քաղաքական ազատութիւն նուաճելու ժամանակ բուրժուազիան ծշտական օգտուել է պրօլետարիատի ծառայութիւններից, բայց չաղթութիւնը ստրել են թէ չէ, բուրժուազիան իր ձեռքն է առել իշխանութիւնը և սկսել է կռուել բանուորների և բանուորական հարցի դէմ: Դժբախտաբար քաղաքական և քաղաքացիական ազատութիւնը նա այնպէս է բացատրել ինչպէս ձեռնտու է իրան:

Օրինակ բելգիական սահմանադրութիւնը 1831 թուականին յայտարարել էր հետեւելը. «Քաղաքացիք իրաւունք ունեն դաշնակցութիւններ կազմելու, այդ իրաւունքը չի կարող որեւէ կանխակալ թույլութիւնների ենթարկուել»:

Բայց անա փոքրիկ ճանաքաղաքում բան-



ւորները միտք էին չղացել շուրհակների դաշնակցութիւն կազմել, նոքա դրամարկղ էին հիմնել իրանց համար գործադուլի դէպքում օգտուելու համար, և ի՞նչ. բուրժուազիան ցնցուեց, ոտքի էլաւ և բանուորներից դրամարկղը խելով սաստց, որ դաշնակցութիւնները իրաւունք չունեն սեփականութիւն ունենալու:

Անգլիայում դաշնակցութիւնները կազմակերպւում են յայտնապէս առանց այլ և այլ ձգձգումների: Շվեյցարիայում դաշնակցութիւնների մասին հետեւեալ կանոնադրութիւնը կա՛ ջաղաքացիք իրաւունք ունեն դաշնակցութիւններ կազմելու, եթէ միայն նրանք իրանց նպատակներով ու միջոցներով օրէնքի դէմ և վնասակար չեն պետութեան համար:

Ընդհանրապէս դաշնակցութիւնների իրաւանց մասին շատ քիչ բացայայտ օրէնքներ կան: Ամենից լաւը և յարմարն է՝ իրաւունք տալ դաշնակցութիւնները յայտնապէս կազմակերպելու: Դաշնակցութիւնների իրաւունքները կախումն չպէտք է ունն նան թույլտուութիւնից, որեւէ արգելքներ չպէտք է լինեն և արգելքները միայն այն դէպքում պէտք է լինեն երբ դաշնակցութիւնը խախտում է երկրի օրէնքը:

Ի դէպս, սպանութիւնների և բռնութիւնների, «սե հարիւրակ», դաշնակցութիւնը, ամեն մի բարեկարգ պետութեան մէջ վաղուց պէտք է արդար գատի ենթարկուէր:

Թէ որքան օրինաւոր կամ ապօրինի է այս կամ այն դաշնակցութիւնը, վճռել կարող է եր-

դուեայ ատենականների դատարանը միայն, որը ամբողջ ժողովրդի խիղճն է ներկայացնում:

V. ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐԻ ԱԶՍՏՈՒԹԻՒՆ.

Բացի դաշնակցութիւնների ազատութիւնից, քաղաքացիք պէտք է ունենան և գործադուլների ազատութիւն, այսինքն միաբան աշխատելուց հրաժարուելու իրաւունք:

Բոլոր պետութիւնները ընդունում են մի մարդու իրաւունքը, հրաժարուել աշխատելուց, իսկ երբ այդ հրաժարումը հանրական ձև է ստանում, այդ դէպքում շատ պետութիւններ պատիժների են ենթարկւում:

Այդ արւում է բոլոր գործատէրերին շահելու համար, որոնց ձեռնառու չէ բանուորների այլալիսի հանրական մերժումը: Գործադուլների արդելու մենբրը էապէս անարդար է:

Կապիտալիստների զէնքը բանուորների դէմ կապիտալն է և հարստութիւնը, որը նրանց փրկութեան միջոցն է, իսկ բանուորները բացի դաշնակցութիւններից, ու գործադուլներից ուրիշ զէնք չունեն—կապիտալիստների դէմ:

Շատ երկրներումն են բանուորները ձեռք բերել դաշնակցութիւնների և գործադուլների ազատութիւն, բայց զրան միանգամից չեն հասել և նուաձել են միայն ուժով:

Ամենուրեք և միշտ գործարանատէրերը գործադուլների ազատութեան դէմ են եղել, բայց ա-

մեն անդ էլ այդ պարտնաչքը մեղանչել են և վերջի վերջոյ դիմել են կառավարութեան և խնդրել, որ կառավարութիւնը պաշտպանի նրանց, սանձարձակ բանուորների, նրանց դաշնակցութիւնների և գործադուլների դէմ, որովհետև այդ ազատութիւնը ոչ կառավարութեանն է ձեռնառու, ոչ էլ բուրժուազիային:

Ի դէպս՝ շատ վիրաւորական, կրկնակի անարգար ու զզւելի է, երբ խաղաղ ցոյցերի ժամանակ, օրինակ Բաղոււմ, Տփլիսում, Կորթին ներշնչում են, կամ աւելի լաւ է ասել՝ հրամայում են ամբոխի մէջ նշան դնել մենակ «սեւերին» այսինքն հաշերին կամ վրացիներին ընդհանրապէս, իսկ շէկերին՝ այսինքն ուսներին խնայել, ինչպէս ականատեսներն են հաւատացնում. և մի՞թէ սա ճշմարիտ է!...

Կամ թէ ձերբակալում են բանուորների ահազին քանակութիւն «սեւերին» և ամբողջ ամիսներով բանտարկուած պահում, իսկ միւսնոյն յանցանքների համար «շէկերին» իսկոյն և եթ ազատում են:

Այստեղ սե ու շէկի խնդիր չպէտք է լինի: Սա աշխատանքի կռիւ է հարստահարողների դէմ, կռիւ՝ որը անխտիր միացնում է բոլոր աշխատող ձեռքերը:

VI. ԽՂՃԻ ԿՍՄ ԿՐՕՆԻ ԱԶՍՏՈՒԹԻՒՆ.

Խղճի ազատութիւնը նշանակում է այն, որ չպէտք է ու որի ենշել հաւատի համար, այնպէս որ իւրաքան իւրը կարողանայ աղօթել իւր հաւատով և ապրել:

Հաւատոր խղճի բան է, և ամեն մէկի համար իւր հաւատը և լաւ է և թանգ: Հաւատի համար կարելի է վիճարանել և համոզել իրար, բայց վերաւորել մէկին նրա համար միայն, որ նա այնպէս չի հաւատում, ինչպէս մենք—այդ անկարելի է: Բոլոր քաղաքացիք միաժամանակ անխտիր պէտք է վաչելեն միւսնոյն իրաւունքներն, ինչ հաւատ էլ դաւանելիս լինի:

Կրօնական ազատութեան ամենակատարեալ աստիճանը Ամերիկայումն է տիրում,—Միացեալ Նահանգներում: Խղճի լայն ազատութիւնը Ամերիկայումն չի խանդարում ոչ ոքի խաղաղ ու հաշտ ապրելու, այդպիսի ազատութեան համար ոչ ոք չի տուժում այնտեղ. ընդհակառակը՝ բոլորն էլ այնտեղ յարգանքով են վերաբերում դէպի իւրաքանչիւրի հաւատը, և չեն բռնաբարում ուրիշի խիղճը: Հայն ազատութիւնը չի խանդարում այնտեղ, աղքատներին աւելի լաւ ապրելու քան օրինակ մեր մօտ, ինչ հաւատ էլ որ դաւանելիս լինի բանուորը:

Ամերիկայում կապիտալիստ—տէրերը բոլորին էլ համահաւասար շահագործում են. հէնց մեր մօտ էլ կապիտալիստները—հայ են թէ չէ բանուորները—երկուսին էլ պատրաստ են ճնշելու, միւսնոյն է, ինչ հաւատ էլ նրանք դաւանելիս լինեն:

Տնտեսապէս և մտաւորապէս չեա մնացած երկրներում, այսինքն ուր վատ է զարգացած արդիւնագործութիւնն ու հողագործութիւնը, ուր՝ չքաւորութիւնը շատ է, իսկ լուսաւորութիւնը՝ քիչ:

այնտեղ ոչ կրօնական ազատութիւն է նկատում ոչ էլ համբերողութիւն:

Այդ տեսակ երկրներում ողջ ժողովրդական դժգոհութիւնների՝ չքաւորութեան, տգիտութեան աղքատութեան պատճառը ոչ թէ իսկական յանցաւորների վրայ է ընկնում այլ այլադաւան ժողովրդի վրան:

Պարզ է, որ այստեղ միայն այն կարգերն են մեղաւոր, որոնց գոյութեան շնորհիւ մէկը կարող է միւսին ճնշել, ահա և մարդիկ ամեն տեղ աւելի լաւ և արդար կարգերի պէտք է ծղտեն:

Իրան հասնելու ամենալաւ միջոցն է՝ ընդհանուր, ուղիղ, գաղանի և հաւասար ընտրողական իրաւունքը. երբ չունենոր մարդիկն էլ պէտք է իրանց ներկայացուցիչներն ընտրեն երկրի կառավարութեան և աւելի արդարադատ օրէնքներ մշակելու համար:

Այդ ընդհանուր ընտրողական իրաւունքը յաղթութեան առաջին քայլը կլինի, իսկ մնացածը կախած է քաղաքացիների զիտակցութիւնից և բանուորների իրանց շահերը—այսինքն արդարութեան և աշխատանքի—շահերը պաշտպանելու ընդունակութիւնից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՆՈՒՆՔ.

Ընտրողական իրաւունք — այսինքն ժողովրդի այն իրաւունքը, որով նա կարող է ընտրել իւր հաւատարմատարներին (ընտրեալ ներկայացուցիչ-

ներին) մեծ նշանակութիւն ունի. չէ որ այդ ընտրեալները մ. անակցում են օրէնքներ հրատարակելու, երկրի կառավարութեան մէջ, հարկեր և տուրքեր են նշանակում, ամբողջ տէրութեան եկամուտըն ու ծախքն են որոշում:

— Ուրեմն երկրի բոլոր բնակիչները շահագրգռուած են այն հարցով, որ ամեն ինչ երկրի մէջ նշմարութեամբ կատարուի. իսկ այդ կարելի է այն ժամանակ, երբ ժողովրդական ներկայացուցիչների ընտրութեան մէջ բոլոր բնակիչները կմասնակցեն: Այս պատճառով աւելի կանոնաւոր կարգ ու կանոններ, ինչպէս վերն է չիշուած, կլինեն այն ժամանակ, երբ ընտրութեան մէջ ընդհանուր, հաւասար և զայտնի ընտրողական իրաւունքը կհաստատուի:

— Ընդհանուր ընտրողական իրաւունք — կրնանակէ, որ երկրի բոլոր չափահաս քաղաքացիները, գատարանի որոշմամբ իրաւունքից չ'զրկուած, ոչ խելագարները և այլն, ժողովրդական ներկայացուցիչների ընտրութեան մասնակցելու իրաւունք պիտի ունենան:*)

— Բոլոր աղամարդիկ և կանայք առանց կոչման, գասակարգի խտրութեան, ամեն ցեղից և ազգից, որոնք ապրում են Ռուսաստանում, այդ իրաւունքը հաւասար կերպով պիտի ստանան:

— Կանայք համարեա ոչ մի տեղ քաղաքա-

*) Սովորաբար ընտրութեան իրաւունքից զուրկ են զինւորական, ոստիկանական կամ կառավարչական ծառայութեան մէջ զտնուող անձինք, օրինակ՝ նահանգապետները, գաւառական փարչութեան մեծաւորները և այլն:

կան իրաւունք չունեն, և այդպիսի կարգ ու կանոնները մեծ անարդարութիւն պիտի համարել:

— Չէ՞ որ կանայք, ինչպէս և ամենքը պարտաւոր են հպատակուելու իւրեանց պետութեան օրէնքներին և կանոններին պարտաւոր են տուրքեր ու հարկեր տալու. ուրեմն ի՞նչպէս զրկել նոցա այդ օրէնքներն ու կանոնները քննադատելու իրաւունքից. այդ չափազանց անարդարութիւն է!

— Եւ առհասարակ ընտանիքում թէ պետութեան մէջ կնոջ գրութիւնը շատ ստորադրեալ և ցած է. նորա պէտք է ամբողջ թափով կռիւ մղեն աղամարդկանց հետ իրաւունքներով հաւասարուելու համար, և այդ կարելի կլինի այն ժամանակ, երբ կանայք ընտրողական իրաւունք կստանան:

— Երբ որ իրաւագուրկ են, տէրութեան բնակիչների կէսը ստորացած է, ժողովրդի մտքերի և հոգեկան ոյժերի կէսը ընդհանուր օգտին չի աշխատում — այդ անմտութիւն է և անարդարութիւն:

— Նոյնպէս պետական ծառայութեան մէջ հաւասար իրաւունքներից զուրկ են Ռուսաստանի շատ ազգեր, անկարող են իրենց որդոց դպրոցներում կրթութելու, իրենց լեզուով խնդիրներ գրելու և տեղական հիմնարկութիւնների մէջ իրենց գործերը տանելու, անկարող են ազատ ապրել Ռուսաստանի ամեն մի տեղ և այլն:

— Այն ինչ օրէնքին համաձայն նորա պարտաւոր են հնազանդուելու, հարկեր և տուրքեր տալու, զաւակներին զինւորագրութեան ուղարկելու. մի խօսքով, բոլոր պարտաւորութիւնները կա-

տարուժ են, ուստի և բոլորովին օրէնքին դէմ է նոցա հաւասար իրաւունքներէյ զրկելը:

— Ընտրողական իրաւունքը ընդհանուր պիտի լինի Ռուսաստանի բոլոր բնակիչների և բոլոր ազգերի համար:

— Շատ կարևոր է ուշադրութիւն դարձնել, թէ մարդ ինչ հասակին, քանի տարեկան է իրաւունք ստանում ընտրող և ընտրեալ լինելու իբրև ժողովրդական ներկայացուցիչ:

Քանի բարձր է այդ հասակը, քանի մարդ աւելի մեծ հասակումն է ստանում ընտրողական իրաւունքը, այդ աւելի ևս ձեռնտու անյարմար չէ մանաւանդ ամբողջ աշխատաւոր ժողովրդի համար:

Չպէտք է մոռանալ, որ աշխատաւոր, բանւորական կեանքը միշտ լի է չքաւորութեամբ և զրրկանքներով, անժամանակ ծերացնում է, արագութեամբ մաշում է մարդու առողջութիւնն ու ուժերը:

Գիտութիւնը հաշուել է և համեմատել է, թէ ո՞վ է աւելի ապրում. հարուստները թէ աղքատները:

Եւ պարզուեց, որ ընդհանրապէս, միշին թուով բանւորները աւելի պակաս են ապրում, քան հարուստներն ու ապահով մարդիկ. ուրեմն, եթէ մեծ հասակ նշանակել ընտրողների համար, կ'նշանակէ բանւորներից իրաւունքների մի մասը խլել, որովհետև ծեր բանւորներն աւելի քիչ են, քան ծեր հարուստները:

Չպէտք է մոռանալ նոյնպէս, որ հասարակ

ժողովուրդը շատ վաղ է ստիպուած աշխատանքի դիմելու. փոքր հասակից նա արդէն աշխատանքի և գործի մէջ է, նա շատ վաղ է առիթ ունենում պարտաւորութիւնների և զրկանքների հանդիպելու իւր աշխատաւոր կեանքի մէջ:

Բանւորը, գործակատարը, արհեստաւորը—դեռ մանուկ հասակից ծառայութեան աշխատանքի մէջ են. նոցա համար նոյն այդ մանկական հասակից կարևոր են աշխատանքի օրուան, տուգանքների, ապահովագրութեան և այլ օրէնքները:

Գիւղական կեանքի մէջ յաճախ չափազանց երիտասարդ տարիների տէր տղային պսակում են, երբեմն նոյնիսկ մինչև քսան տարեկան հասակը. երիտասարդը ուրեմն ստիպուած է սեփական տրնտեսութիւնը կառավարել, հարկեր ու տուրքեր տալու և այլն:

Այս պատճառով յօդուտ ամբողջ աշխատաւոր դասակարգի բոլորովին տեղին, յարմար և արդարացի կլինէր, որ ընտրողական իրաւունք ունենար ամեն մէկը, ասեմք, քսանեմէկ տարեկան հասակից — քաղաքացիական չափահասութեան ժամանակից:

Յաճախ ընտրողական իրաւունք տալու համար պահանջուած է, որ մարդ որ և է տեղ, կամ որ և է քաղաքում առանց հեռանալու որոշ ժամանակ, մէկ կամ երկու տարի ապրած լինի. այսպիսի ճնշումը աշխատաւոր դասակարգի համար առանձնապէս անյարմար է:

Քիչ չէ պատահում, որ բանւորից անկախ կերպով գործարանները դադարում են աշխատել,

արհեստանոցը, գրասենեակը կամ խանութը փակ-
 ւում է. բանւորը ակամայ ստիպուած է ուրիշ տեղ
 որոնել և յանախ—ուրիշ քաղաքներում և այդ պատ-
 ճառով մարդ կարող է զրկուել ընտրողական իրա-
 ւունքից:

Ամեն մէկիս յայտնի է, որ շատ զիւղացիներ
 աշխատանքի համար գնում են օտար երկիր և այն-
 տեղ ամբողջ տարի չեն ապրում, այլ միայն մի քա-
 նի ամիս, օրինակ հիւսները, քարտաշները, գետին
 փորողները և այլք. մի թէ արդարացի կլինէր սոցյա
 ընտրողական իրաւունքից զրկելը. ինչ նշանակու-
 թիւն ունի այստեղ այն հարցը թէ երկար կամ
 կարճ ժամանակ և կամ վաղուց կամ ոչ վաղուց է
 ապրում մարդ այդտեղ:

Կան և ուրիշ սահմանափակումներ ընդհա-
 նուր ընտրողական իրաւունքի վերաբերմամբ, ինչ-
 պիսին է օրինակ հետեւեալը՝ եթէ ընտրութիւնը
 զուտ դասակարգային ձևով է կատարուում, օրի
 նակ զիւղացիները զիւղացուն են ընտրում միայն,
 կամ ապրած տեղերով՝ օր. քաղաքացիները միմի-
 այն քաղաքացիներին են ընտրում:

Այսպիսի ընտրութիւններն արդէն ընդհանուր
 չեն կարող կոչուել. եթէ ընտրողական իրաւունքը
 ընդհանուր է—ամեն մի քաղաքացի, ուրեմն, կա-
 տարեալ իրաւունք պիտի ունենայ այն մարդուն
 ընտրել իբրև ներկայացուցիչ, որին նա հաւա-
 տում է:

Հարցը նորանում չէ, թէ որտեղ է ապրում և
 ինչով է պարապում. ընտրութեան ժամանակ կա-

րևոր է իմանալ, թէ ներկայացուցիչը ինչ պիտի
 պաշտպանի, ինչ օրէնքների և կանոնների պիտի
 ձգտի. մի խօսքով կարևոր է ներկայացուցիչի ծրա-
 զիրը (պահանջների):

Այնտեղ ուր քաղաքական կեանքը զարգացած
 է, այսինքն սնակիչները հետաքրքրուում են քաղա-
 քական և հասարակական հարցերով, մարդիկ ուս-
 տիճանաբար, պետական կեանքի զանազան հարցե-
 րի մասին միակերպ մտածողները, համախմբուում
 են և կազմում քաղաքական կուսակցութիւն:

Ընտրութիւնների ժամանակ կուսակցութիւ-
 նը ժողովրդին առաջարկում է իւր մարդկանց ըն-
 տրել իբրև ներկայացուցիչ, ինչպէս ասում են, կու-
 սակցութիւնը իւր թեկնածուներին է առաջ քա-
 շում. հասարակութեան համար հետաքրքրելի է, թէ
 արդեօք ինչ ծրագրով է ղեկավարուում կուսակցու-
 թիւնը, այսինքն ինչ է պահանջում:

Հասարակութիւնը հաւատացած է, որ եթէ
 կուսակցութիւնը առաջարկում է իւր թեկնածու-
 ներին—կնշանակէ, որ կուսակցութիւնը իւր խօս-
 քին հաստատ կմնայ, կկատարէ իւր խոստումները
 և ուրեմն պարտաւոր է պաշտպանել իւր ծրա-
 զիրը:

Ընդհանուր ընտրողական իրաւունքի գոյու-
 թեան զէպքում մի կուսակցութեան մէջ են մի-
 անում զանազան մարդիկ զանազան տեղերից:

Ի հարկէ, սովորաբար կուսակցութիւնները լի-
 նում են կամ դասակարգային (հողագործային, վա-
 ճառականական, զիւղացիների), կամ աշխատանքի

ձեին համաձայն (բանւորական, հարուստ կապիտալիստական):

Այժմ այստեղ, Ռուսաստանում ժողովուրդը անկատար և չափազանց կիսատ քաղաքական իրաւունքներ ստացաւ. ահագին մեծամասնութիւնը զուրկ է ընտրողական իրաւունքից, այստեղ ընդհանուր ընտրողական իրաւունքի նշանն անգամ չ'կայ:

ՀԱՒԱՍՍԱՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ.

Ընտրողական իրաւունքը ոչ միայն ընդհանուր, այլ և հաւասար պիտի լինի. այս կ'նշանակէ, որ ամեն մի կոչման, զասակարգի և հարստութեան տէրը քաղաքացին ընտրողական հաւասար իրաւունքով պիտի օգտուի:

Հարուստները հասարակ ու չքաւոր քաղաքացիների հետ համեմատաբար ոչ մի առանձին իրաւունք չ'պիտի ունենան. ամենքը պիտի հաւասար լինեն: «Մէկ մարդը—մի ձայն», ստում են անգլիացիները:

Պետական ժողովի ընտրութիւններին վերաբերեալ կանոններին համաձայն—այն մարդը, որը միաժամանակ գաւառում հող և քաղաքում տուն ունի ընտրութեան դէպքում ինչպէս գաւառում, նոյնպէս և քաղաքում ունի մասնակցութեան իրաւունք:

Այնտեղ, ուր ընդհանուր ընտրողական իրաւունք չ'կայ, այլ կայ որոշ իրաւանց հիման վրայ

ընտրութիւն—այսինքն հարստութեամբ, զասակարգային ձևով—այնտեղ չ'կայ և հաւասարութիւն: Մեր պետական ժողովին վերաբերեալ օրէնքների մէջ ամենևին չ'կայ հաւասար ընտրողական իրաւունք:

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ.

Ընտրողական իրաւունքը պիտի լինի ուղղակի—այսինքն հասարակութիւնը իրաւունք պիտի ունենայ սւղղակի, անմիջական ձևով ընտրել ժողովրդական ներկայացուցիչներին, և ոչ թէ նախ ընտրել իւր հաւատարմատարներին, որոնք դարձեալ պիտի ընտրեն իրենց միջից լիազօրներ, իսկ վերջինները, վերջապէս, ընտրեն ներկայացուցիչներին:

Երբ որ ընտրութիւնը անմիջական է, ամեն մի քաղաքացի աւելի ուշադրութեամբ աւելի լուրջ է վերաբերում դէպի ընտրութիւնը: Այս դէպքում ամեն մէկը՝ զգում է, որ ներկայացուցիչների որպիսութիւնը կախուած է իրանից:

Ամեն մէկը ուշադրութեամբ լսում է ժողովներին խօսող զանազան կուսակցութիւնների ներկայացուցիչներին, զանազան ծրագրները համեմատում է (պահանջները) և ինքն է վճռում, թէ արդեօք որ ներկայացուցիչն է չարմար իւր համար, որին կարող է հաւատալ իբրև իւր շահերի պաշտպան ժողովրդական ներկայացուցիչների ժողովին:

Այսպիսով ընտրուած ներկայացուցիչը ճշմարտապէս հասարակութիւնից ընտրեալ կլինի: Ով

ստացել է մեծամասնութեան ընտրողական ժաչնր
 —նա կլինի ներկայացուցիչը, ժողովրդի ճշմարիտ
 ընտրեալը: Ուր ներկայացուցիչներին ընտրում է ոչ
 ժողովուրդը, այլ զանազան լիազօրներն ու հաւա-
 տարմատարներ են ընտրում—այնտեղ, իհարկէ ան-
 միջական ընտրողական իրաւունքը բացակայում է.
 այսպիսի կարգ ու կանոնները սխալ են և անիրա-
 ւացի: Ռուսաստանում, մեզ մօտ, պետական Գու-
 մային վերաբերեալ կանոնների համաձայն ամենեւին
 չ'կայ հաւասար ընտրողական իրաւունքը: Բանուօր-
 ների և զիւղացիների համար հրատարակած ընտրու-
 թեան կանոնները չափազանց անպէտք և վատ են:

ԳԱՂՏՆԻ ՔՈՒԷՍՐԿՈՒԹԻԻՆ.

Որպէսզի ամեն մի ընտրող կարողանայ ներ-
 կայացուցիչ ընտրել ազատ—առանց վախճնալու,
 խղճի և ցանկութեան համաձայն—անհրաժեշտ է
 դադանի քուէարկութիւն—այսինքն ներկայացու-
 ցիչներին անուները գրած թղթիկները փակ ծրա-
 րով ներկայացնել: Այն ժամանակ ոչ ոք երկիւղ չի
 կրի և ազատ կզրի իւր ներկայացուցչական թեկ-
 նածուի անունը. սա առանձնապէս կարեւոր է բան-
 ւորների, ծառայողների և առհասարակ ամեն մէկի
 աչսպէս թէ այնպէս հարուստներից կամ իրենց զըլ-
 խաւորներից կամ տէրերից կախում ունեցողների
 համար:

Միմիայն դադանի քուէարկութեան միջոցով
 կարող է հասարակութիւնը ընտրել ուժը կամենալ.

միայն այսպիսի ընտրութեան մէջ կարելի է չուսալ,
 որ ներկայացուցիչները իսկապէս ժողովրդի մեծ-
 մասնութեան ցանկութեան համաձայն են ընտր-
 ուած:

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.

Կանոնաւոր ընտրութեան համար ամենամանհրա-
 ժեշտ պայմանն է ընտրութեան ազատութիւնը: Սո-
 րա համար անհրաժեշտ է, որ հասարակութեանը
 ոչ ոք չ'խանդարի ազատ հաւաքուելու մինչև ըն-
 տրութիւնը. անհրաժեշտ են բաց և հանրամատչե-
 լի ընդհանրական ժողովներ, ուր ամեն մի կամեցո-
 ղը կարողանայ խօսել:

Այն ժամանակ բոլոր կուսակցութիւնները բա-
 ցարձակ կչայտնեն իրենց ծրագրները, իսկ ամբողջ
 ժողովուրդը աւելի կպարզէ իրեն համար քաղաքա-
 կան և հասարակական կեանքի բոլոր հարցերը:

Ընտրութեան ազատութեան համար, ինչպէս
 վերը չիշեցինք, անհրաժեշտ է մամուլի, միութիւն-
 ների ազատութիւնը, որպէսզի ամենքը բացարձակ
 կերպով կարողանան խմբուել ու կազմել զանազան
 քաղաքական կուսակցութիւններ և այլն: Բացի այդ,
 մինչև ընտրութիւնները անհրաժեշտ է ընդհանրա-
 կան ներուժն—այսինքն քաղաքական յանցաւորնե-
 րի, թէ բանտերից և թէ արտօրատեղերից, ազատու-
 թիւնը:

Պիտի ոչնչացնել ամեն տեսակ ճնշումներ (պա-
 տերազմական գրութիւն և այլն): Նասկանալի է,

որ ներկայ պայմանների զոյութեամբ անկարելի է ընտրութեան ազատութիւնը:

Ժողովրդական ներկայացուցիչները, որոնք բնտրուած կլինեն ընդհանուր, հաւասար, անմիջական և գաղտնի քուէարկութեամբ—առւսաց պետութեան մէջ նոր կարգեր ու կանոններ պիտի մտցնեն և հաստատեն:

Այն ժամանակ մեր մէջ կտիրեն ճշմարիտ և արդար կարգ ու կանոններ ու կանոնաւոր օրէնքներ, երբ պետական գործերը կ'կառավարեն և կրվճուեն ժողովրդական ներկայացուցիչները փոխադարձ ցանկութեամբ և համաձայնութեամբ:

Այն ժամանակ միայն, ոչ ոստիկանութիւնը, ոչ դաւառական պետերը, ոչ նահանգապետները և ոչ նոյն իսկ նախարարները, բացի գատարանական իշխանութիւնը, չեն կարող նշանակել ոչ մի պատիժ կամ պահանջ մասնաւոր մարդկանց առանց երդուեալ դատաւորների կարգադրութեան, լինի զա հասարակ զիւղացի կամ բանւոր, չեն կարող սահմանափակել և առաւել ևս զրկել որ և է իրաւունքից:

Ոչ մի պաշտօնական անձնաւորութիւն, ոչ նոյնիսկ նախարարը, ոչ մի ոստիկանական կամ կառավարչական աստիճանաւոր չեն կարող կալանաւորել, խուզարկել մասնաւոր բնակարանները, զբախանութների իրաւունքները սահմանափակել, լրագրներին և զանազան թերթերին արգելքներ դնել այս կամ այն առարկաների և դէպքերի մասին զրկելու, մասնաւոր և հասարակական զրազարան-

ներին արգելել այս կամ այն զիրքը, լրագիրը կամ թերթը տալ ընթերցողներին, արգելել դարեչրատներին, թէյարաններին ունենալ կամ պահել այս կամ այն զրքերը, լրագրներն ու թերթերը, արգելել համագումարներն ու ժողովները, հալածել աղանդաւորներին, օտարահաւատներին և այլն և այլն:

Այն ժամանակ ամեն մի քաղաքացին, ինչ յանցանքի համար և լինի, կ'ենթարկուի միմիայն երդուեալների հրապարակական դատին կամ ընտրեալ հաշտարար հրապարակական դատին, նաչելով յանցանքի աստիճանին:

Ամեն մի մարդ՝ ոստիկան, առհասարակ ամեն մի պաշտօնական անձնաւորութիւն, նոյնիսկ ինքը նախարարը իւր յանցանքի համար իր իրաւունքը ի չարը գործ դնելու, որ և է մէկի իրաւունքը խախտելու համար պիտի ենթարկուի կամ ընտրեալ հաշտարար հրապարակական դատին, և կամ երդուեալների հրապարակական դատին:

Սակայն որպէսզի դատարանը արդարացի և ճշմարիտ լինի, որպէսզի դէպի ամեն մէկը, ինչպէս օրինակ, դէպի նախարարը, զիւղացին, հարուստը, աղքատը, ազնուականը և հասարակ մարդը, գատաւորները հաւասար կերպով վերաբերուեն—գատարանը պիտի անկախ լինի:

Դատարանի անկախութիւնը կաշանուծ է հետեւեալի մէջ— ոչ մի վարչութեան պետ, նոյնիսկ նախարարը չի կարող փոխարինել դատաւորին, կամ տեղափոխել նորոն, կամ պակասեցնել նորոս ռոճիկը, և մինչև իսկ իրաւունք չունի պարզե տալ

դատաւորին և, վերջապէս, իրաւունք չունի դատաւորանական գործերի մէջ խառնուելու:

Դատաւորը միայն իւր որ և է յանցանքի համար երդուեալների վճռին համաձայն կարող է պաշտօնագուրկ լինել:

Հաշտարար դատաւորներին պիտի որոշ շրջանի բնակիչները ընտրեն, որոշ ժամանակով, իսկ այդ ժամանակամիջոցում նոքա անասան պիտի մնան իրենց պաշտօնում:

Հաշտարար դատաւոր ընտրելու համար ոչ մի գոյքի իրաւունք չէ պահանջում, — ուստի և ամեն մի զիւղացի, բանւոր կարող է հաշտարար դատաւոր ընտրուել: Դատը միշտ պիտի հրապարակական և բաց լինի:

Բացի ընտրեալ և երդուեալների դատարանը և մէկ էլ միակ բարձրագոյն վճռաչինչ ատեանը, — կառավարութեան կողմից ոչ մի այլ նշանակեալ հաշտարար դատարաններ չ'պիտի լինին:

Վերջապէս ոչ ոք չ'պիտի հանուի երդուեալ դատաւորների ցուցակից իրենց ծագման, գոյքի կամ հասարակական դիրքի, կրօնի կամ ազգութեան հիման վրայ, այսինքն, ամեն մի բնակիչ իրաւունք ունի երդուեալ դատաւոր լինելու. միայն վիճակը և հերթական կարգը պիտի վճռի, թէ դատարանի գործունէութեան այս ինչ ժամանակ ով պիտի լինի երդուեալ դատաւոր:

Իժմախտարար մեր Դուժան ունի շատ բացասական կողմեր:

Իժուար է միմեանց մէջ լաւ համաձայնութիւն

կապացնել, որ Դուժայի համար ընտրւին խելացի և շիտակ մարդիկ, որոնք կծշակեն արդար և կարեւոր օրէնքներ: Պէտք է ցանկալ և ձգտել, որ ամբողջ Հողը պատկանի նրանց, որոնք մշակում են նրան, տնտեսութեամբ են պարապում նրա վրայ: Գործարանները բանուորներին — իրանց պատկանեն և այլն:

Այդպիսով բոլոր հարցերը կքննուեն աշխատաւոր մասսայի տեսակէտից և նոքա կգործեն նրա օգտի և շահերի համար:

Պէտք է պինդ կանգնել և, հսկել, որ կալսերական մանիֆէստով տրուած ազատութիւնները ոչ որ չխախտի:

.

Մենք Պեղ թույլ տուինք այս գրքոյկի էջերում մի քանի խօսք ասել ազատագրական մեծ շարժման մասին, քանի որ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգարարձուն էլ Հաղորդագրութիւն է ուղարկել բոլոր գիմնագիտներին, որի մէջ նա առաջարկում է ուսուցիչներին և դաստիարակներին բացատրել դասերի ժամանակ հոկտեմբերի 17-ի ակտի մեծ նշանակութիւնը:

Ուսուցիչները ուշադրութիւն պիտի դարձնեն ժողովրդների պատմական կեանքի այն երևոյթներին վրայ, որոնց գիտակցական ուսումնասիրութիւնը, մի յայտնի չափով, որպէս բանայի, կարող է ծառայել ներկան բմբռնելու համար:

Ուսուցիչները պէտք է բացատրեն, թէ այլ պետութիւններում, ինչպէս են իրականանում մանիֆեստում չիշուած «ազատութիւնները» ի՞նչ ձևով

է արտայայտուած ժողովրդի մասնակցութիւնը կառավարչական իշխանութեան մէջ և այլն:

Իսկ զի սեր են մեր դպրոցները. մեր հասարակութիւնը չետ է մնացել, նա աղքատացել է, արնաքամ է եղել և այժմ էլ լինում է, որից արևի հառադայթներն անգամ զարհուրում են:

Այն, ուզից տասր տարի է անցել այն օրից, ինչպէս ասում է յարգելի Ս. Մխիթարեան իւր սիրուն բանասիրականի մէջ*, երբ վերջին անգամ հայոց եկեղեցական-ժխական ուսումնարանների դրուները ամուր փակեցին հայ մանուկների առաջ և ուսուցիչ ու աշակերտ անօրնական ցրուեցին փողոցներում, իբրև յանցաւորներ, որոնց պէտք էր պատժել անդթօրէն մայրենի լեզուով ուսանել կամ ուսուցանել չանդգնելու համար:

Մեծ ոճիրը կատարուեց. կատարուեց լուրեալն, առանց նոյնիսկ ամենաթոյլ բողոքի դժբախտ զոհի կողմից, թէպէտ զոհը կորցնում էր դպրոցների հետ միասին իր ամենից աւելի թանգագին, ամենից աւելի գուրգուրած ու փայփայած բանը աշխարհիս վրայ, և զարմանալի էլ չէր. ոճրագործը մի ձեռքով պինդ սեղմել էր զոհի կոկորդը, իսկ միւսով հանդիստ ու աներկիւզ, վստահ իր ոյժի և անդթութեան վրայ, կողոպտում ու յափշտակում էր նրանից այն իրաւունքը, որ ըստ երեւոյթին, պէտք է անկողոպտելի համարւէր:

Տասր տարի — դա քիչ ժամանակ չէ մարդկային կարծօրեայ կեանքում: Այժմեան դեռահաս սերունդը, որ անշուշտ չէ տեսել հայ տարրական ու-

*) «Մշակ» յունվար 28. 1906 թ.

սումնարանի երես, երեւակայել անգամ չէ կարող թէ ինչպիսի եռուն կեանք, ինչպիսի աշխույժ գործունէութիւն էր տիրում այդ, ըստ արտաքինի, «խղճուկ» դպրոցներում, որոնց և՛ զարդն, և՛ գեղեցկութիւնն, և՛ հմայքը մի բան էր միայն — անփմադրելի ձգտումն դէպի գիտութիւն և աւազափմութիւն, անսահման սէր դէպի մայրենի լեզուն և բուռն ոգևորութիւն դէպի հայրենի անցեալ աւանդները:

Եւ այդ փոքրիկ «խղճուկ» դպրոցները, ոչ միայն ապրում էին իրանք կուլտուրական խաղաղ աշխատանքի բեղմնաւոր, գործունէայ կեանքով, այլ նոյն կեանքով ապրեցնում էին նաև ամբողջ հայ հասարակութիւնը, հայ մամուլը և հայ զրականութիւնը:

Գաւառական քաղաքներում և գիւղերում հասարակական կեանքը պտոյտ էր գալիս դպրոցների շուրջը, որով վերջանում կամ սկսւում էր ամեն մի խօսակցութիւն. ուսուցիչ, աշակերտ, աշակերտուհի, դպրոցական շինութիւն, զրական երեկոյթ, տօնաժառ, ներկայացում, ծնողական ժողովներ — ահա թէ ինչով ապրում ու շնչում էր գաւառը, ահա ինչի մասին էր անընդհատ հոգում ու մտածում նա: Սրա հետ միասին պարբերական մամուլը լիքն էր մանկավարժական յօդուածներով կամ դպրոցական կեանքի բազմաթիւ երեւոյթների նկարագրութիւններով, իսկ գրականութեան մէջ, անընդհատ, մէկը միւսից, յետոյ, լոյս էին տեսնում մանկական ընթերցանութեան գրքեր, մանկավարժական գրուածքներ ամսա-

զրեր, դասազրբեր, կազմուծ էին ծրագրներ դպրոցական գործի բարգաւանման համար, տեսնուծ էին լաւագոյն երազներ...

Եւ այս ամենը մի օր լուց ու ոչնչացաւ... Բռնութեան թանձր խաւարը չօքեց ամենքի կրծքին... և ամենից աւելի ծանրացաւ հայ ուսուցչի և հայ մանկավարժի վրայ: Յուսահատ հովիւներ՝ որոնց հօտը ցրուել էին, իրանք ևս ցրուեցին աշխարհի չորս կողմը և կորան աչքից ու մտքից...

Հայոց քաղաքներուծ և գիւղերուծ կեանքը միանգամից հանգաւ. կախարդական առանցքը դադարեց պտտուելուց. ամեն ինչ ամայացաւ. իրար ետեկից զալիս ու գնուծ էին միայն դատարկ, տրխուր, անլուջս օրեր:

Անտանելի՛ օրեր:

Եւ այսպէս տանն տարի:

Բայց երեկ մեծ է հայի Աստուածը, թէև... նրա մեծութեան ապացոյցները մենք տեսնուծ ենք քիչ, շատ քիչ դէպքերուծ միայն... Այս անգամ հայի այդ դանդաղկոտ Ասածու օգնութեամբ բրունութիւնը վերջ ի վերջոյ կործանեց ինքն իրան և նրա ամբարտաւան շէնքի աւերակների տակից նորից յարութիւն առան մեր դպրոցները:

Յարութիւն, որ մեզ համար թերեւս աւելի մեծանշան և խորհրդաւոր է, քան նոյն իսկ Քրիստոսի յարութիւնը...

Հայի չարանենդ բախտից՝ տասնամեայ թաղուածի յարութիւնը կատարուեց այնպիսի օրերուծ, երբ անհնար էր «ոչ փող հարկանել և ոչ տօն կատարել».—չորս կողմը արիւն էր հոսուծ...

Բայց և այնպէս կեանքն անտարբեր չմնաց դէպի թանգագին վերածնուածը. մեր մտաւոր կենդրոններուծ կազմուեցին ժողովներ, առաջարկեցին ծրագրներ, ընտրուեցին մասնախմբեր դպրոցների ապագայ լաւագոյն կազմակերպութեան վրայ խորհելու համար. իսկ փոքրիկ քաղաքներուծ և գիւղերուծ, արիւն ու կրակի միջից մարդիկ մի ըուպէ դուրս գալով, հաւաքուծ ու մտածուծ են հին ու նոր դպրոցների բացման մասին...

Այո՛, արիւն ու կրակի մէջ անգամ հայը չի մոռանուծ իր մեծ հօգար. նա զգուծ է, որ դպրոցի մասին պէտք է մտածել նոյն իսկ այն ժամանակ, երբ հեռուից լաւուծ է յարձակուող թուրք խուժանի ահաւոր աղաղակը, երբ զէնքից ու օրհասական կռուից զատ՝ ամեն ինչ, ըստ երևույթին, պէտք է մոռացուծ ու արհամարհուած լինէր:

Սա այնպիսի անզուգական փաստ է մեր ազգային—մտաւոր կեանքուծ, որ կարող է—հպարտութեամբ լցուել ամեն մի հայի սիրտ, հպարտութեամբ, որ ոչ մի առնչութիւն չունի սնապարծութեան հետ:

Իպրոց և զէ՛նք—սա պիտի լինի այսուհետեւ հայի նշանաբանը, սա պիտի ոգևորէ այսուհետեւ ամեն մի հայ մարդու:

Իպրոց և զէ՛նք—հրաշալի՛, չքնաղ երկուորեակ, մէկը դէպի լոյս, գիտութիւն, դէպի ազգային բարօրութիւն առաջնորդելու, իսկ միւսը, որպէս պահապան հրեշտակ, արթուն հսկելու հայ վաստակաւորի արիւն-քրտինքով մեռք բերած մը-

տաւոր և նիւթական հարստութեան անկորուստ պահպանութեան վրայ:

Թող միայն, տարրանան մեր մէջ այս ծգտուածները, թող միայն, իբրև ճարմին ու արիւն, անբաժան կապուեն նրանք մեր հոգու հետ, և հետեանքը—մտաւոր, բարոյական և նիւթական հարստութիւնը—շատ չի ուշանայ երևան գալու...

Եւ մենք աւելացնում ենք, որ ժամանակի ոգին պահանջում է նորը, հարկաւոր են ժամանակի ոգուն համապատասխան դպրոցներ, ամեն բանի մէջ պէտք է էվոլյուցիա, հարկաւոր են նոր դպրոցներ, այսինքն ժողովրդական դպրոց, ժողովրդի ձեռքով, ժողովրդի համար, ճիշտ է, որ հասել է ժամանակը թող կորչի այսպէս ասած տիրացուական ոգին մեր դպրոցներից:

Ինչ բարձր, գեղեցիկ ու ճիշտ գաղափար դաստիարակութեան ու մարդու մասին, երբ նոր դպրոցում, մեր որդուն աւելի ուժեղ կտեսնէք մարմնով, աւելի անկախ՝ բնաւորութեամբ և աւելի տէր դարձած իւր անձին:

Ուրեմն դու գորեղ կլինիս. ժամանակի ոգին պահանջում է, որ դու աւելի գորեղ լինիս, ինչպէս հայ ժողովրդին, նրա իսկական բարեկամները քարոզում են:

Գոյութեան կուռում ինքնապաշտպանութիւնից դուրս փրկութիւն չկայ...

«Զօրեղ* թշնամու դէմ միմիայն գօրեղը կարող է պաշտպան գտնել:

*) Տես «Յառաջ» փետր. №19.

Երկարատև ու խոշոր վտանգի ժամանակ արտաքին պաշտպանութիւն չուսալ կարող է միայն նա, ով ընդունակ է ինքն իրեն պաշտպանելու:

Գոյութեան կուռում ինքնապաշտպանութիւնից դուրս փրկութիւն չկայ:

Արտաքին պաշտպանութիւնը սուէրի նման հետևում է ինքնապաշտպանութեան և ընդհակառակը փախչում է՝ անգոր ձեռքերը դէպի ինքը մեկնած թուլամորթութեան առաջից:

Մի՛ աղաչիր, մի՛ պաղատիր, այլ գօրեղ եղի՛ր, ոչժերդ իրենց մաքսիմոսին հասցրու:

Եթէ թույլ լինիս, միշտ, և ամենքը գլխիդ կտան:

Եթէ ուժեղ լինիս, այսօր գուցէ քեզ հալածեն, բայց վաղը բարեկամութիւնդ կփնտրեն:

Եթէ ուժեղ լինես, կլինեն մարդիկ, որոնք կցանկանան ոչժդ խորտակել, բայց և միշտ կգտրուեն դաշնակիցներ, որոնք ոչժիդ ոչժ կաւելացնեն:

Ուժե՛ղ եղիր, որպէսզի կարողանաս պատիւդ կեանքդ ու գոյքդ պաշտպանել:

Ուժե՛ղ եղիր, որպէսզի կարողանաս իդէալին ծառայել».

Եւ ահա մենք թույլ տուինք մեզ հրատարակելու Վեննայի բէալական դպրոցի դասատու պրօֆ. Լէօ Բուրդերշաէյնի այս կանոնները աշակերտ ներ և աշակերտուհիների համար: Այս տեսակ կանոններ մենք հրատարակել էինք և 1900 թուականին, որն արդէն սպառուած է, չուսանք որ այս կանոններն

էլ բեղ մեծ օգուտ կբերեն և դու տուող կլինիս
թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ մտաւորապէս:

Գրքիս մէջ գետեղում եմ մի հրաշալի պատ-
կեր. կեանքի, գոյութեան կռուի մէջ միշտ աչքի ա-
ռաջ ունեցիր այս պատկերը: Քրիստոս որպէս ազ-
նիւ բարեկամ թշուառների և նեղեալների զոհուեց
հանրամարդկային գաղափարների համար, իսկ Ֆրան-
սիացի վիրաւորուած սպան ընկած Քրիստոսի ու-
ների տակ կատարեց իւր սրբազան պարտականու-
թիւններից մէկը—յանուն հայրենիքի...

Ազնիւր ուժեղ է, իսկական ոյժը անձնազո-
հութեան մէջ է:

Քո նշանաբանը թող լինի այս պատկերի գա-
ղափարը...

ԲԺ. Ա. ԲՈՒՂՁՈՒՂԵԱՆ.

Ս.-Պետերբուրգ.
1906 թ. Փետր. 15.

ԱՌՈՂՁՈՊԱՅՍԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՈՒ-
ՀԻՆԵՐԻ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

Բժշկելը, բժշկի պարաքն է, իսկ նախա-
դրուշացումը նրա բարձրագոյն կոչումը:

ՕՐՈՒԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ.

Առաւօտեան արթնացար թէ չէ, էլ անկողնում
պառկած մի՛ մնար, իսկոյն վեր կաց:

Լուա պաղ ջրով գլուխդ ու իրանիդ վերին
մասը—և չոր շորով ցամաքացրու մարմինդ:

Կատարիր այդ բոլորը առանց շտապելու, նա-
խաճաշիր նոյնպէս առանց շտապելու.

Ուտելուց յետոյ, բերանդ ու կոկորդ ողողիր
պաղ ջրով:

Իպրոց գնա ոչ շատ վաղ և ոչ էլ շատ ուշ:
Երբ դպրոցից տուն ես գալիս, մինչև ճաշի
նստելը, ձեռներդ լուա և եղունգներդ մաքրիր:

Այգպէս արա ամեն անգամ ուտելուց առաջ:
Ուտելուց յետոյ անմիջապէս մի սկսիր պարապել:
Կերակուր ընդունելուց յետոյ պէտք է հանգս-
տանալ, մտն գալ, և ոչ թէ իսկոյն պարապելու նստել:
Եթէ կէսօրից յետոյ էլ ունիս դասեր, այն ժա-
մանակ շատ կուշտ մի ուտիր ճաշին:

Աշխատիր օրական ամենաքիչը երկու ժամ
բաց օդում լինել և շարժման մէջ. դպրոց գնալ
—գալն էլ պրա հետ հաշուած:

Պարապիր լուրջ, երբ տանը պատրաստում ես դասերդ:

Աշխատիր աւարտել դասերդ մինչև ընթրիքը: Եռանդուն պարապմունքից չետոյ մարդ լաւ է քնում:

Երբ մարդ կուշա ընթրիքից չետոյ իսկոյն պառկում է քնելու, ծանր երազներ է տեսնում, դրա համար ընթրիքին չպէտք է չափից դուրս ուտել:

Չպէտք է կարդալ քնից առաջ այնպիսի բաներ որոնք կարող են զրգռել մարդուն:

Մի խօսքով կանոնաւոր քնելու համար, պէտք է խոյս տալ ամեն բանից, ինչ որ կարող է խանգարել նրան:

Վաղ քնիր, որ առաւօտեան ստիպուած չլինեն քեզ արթնացնելու, այլ ինքդ կարողանաս ժամանակին վեր կենալ:

Նա, ով աշխատում է մինչև լոյնելը և քնում է անհրաժեշտ ժամանակ, բժշկի օգնութեան կարիք չունի:

ԱՆԿՈՂԻՆ ԵՒ ՀՕԳՈՒՍՏ.

Քնիր կոշա ներքնակի (դոշակ) վրա:

Մի ծածկելի չափազանց տաք և ծանր:

Գլխատակդ շատ բարձր չպէտք է լինի:

Մի պահիր ձեռքերդ վերմակի տակ:

Ննջարանն ու անկողինը անհրաժեշտ է քամուն տալ:

Լոյսն ու օդը քշում են անից հիւանդութիւնը:

Մի հագնիր նեղ ու սեղմող շորեր և մի գործածիր կորսէա, կապիչներ, գօտիներ, օձիքներ, մինչև անգամ փոքր զլխարկ և նեղ կօշիկներ:

Ոտնամանր չպէտք է նեղ նրբան ունենայ, բարձր կրունկներով և սուր քթերով: Կօշիկները պիտի համապատասխանեն ոտերի ձևին ու մեծութեան:

Երկար ման գայու համար, առասաններով (կապերով) ոտնամանները ամենայարգարն են:

Մի բանեցրու 'նոյնպէս'. ծանր զլխարկ, հաստ փողկապ (դալստուխ) և կաշնէ (վղի շարֆ):

Հարկաւոր չէ զլուխն ու վիզը շատ փաթաթել:

Գարնանը զգուշացիր, ձմերային հազուատող շատ վաղ չփոխես գարնանայինի:

Ոտերդ տաք պահիր:

Եթէ ոտերդ թրջուին, իսկոյն հանիր թաց կօշիկներդ ու գուլպաներդ և չորր հազիր:

Առհասարակ զլուխն ու վիզը հով՝ իսկ ոտերը տաք պէտք է պահել: Իսկ պահպանում է առողջութիւնը:

ԿԵՐՍ.ԿՈՒՐ, ԽՄԵԼԻՔ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ,
ԾԽԵԼ ԵՒ ԱՏԱՄՆԵՐԻ ԽՆՕՄՔ.

Չափից դուրս մի ուտիր:

Կամաց կեր և կուլ տալուց առաջ կերակու-

րը լաւ ծամիր, դա թեթեացնում է մարտողութիւնը:

Միշտ նաշիր կարելոյն չափ միւսնոյն ժամերին:

Չուտես և չսմես ամենայն ինչ, որ շատ տաք է:

Որքան կարելի է հանդիստ նախանաշիր:

Տաք կերակրից չետոյ իսկոյն որեւէ սառը բան մի ուտիր և ընդհակառակը:

Շատ մի ուտիր քաղցրեղէն, որը վնաս է ստամոքսին:

Չգուշացիր հում կերակուր ուտելուց՝ օր. հում միս, նարպ, կաթ և այլն:

Խօսկ պտուղներ չուտես: Եթէ պտուղները ինքդ չես քաղել, այն ժամանակ ուտելուց առաջ լաւ լուա կամ հանիր կեղեր:

Չգուշացիր փողոցներում ծախսող մրգեր ուտելուց. նրանք ծածկուած են փողոցային փոշով իսկ դա շատ վտանգաւոր է:

Մի կուլ տար բալը կորիզով, միւս մրգերն էլ ուտելուց սերմերը հանիր:

Չառնես բերանդ՝ ասեղներ, քորոցներ և այլ բաներ:

Կերակուր մի դնիր բերանդ դանակով:

Եթէ ստիպուած ես ուրիշի հետ միւսնոյն ամանից խմել, այն ժամանակ նախ քան խմելդ, լաւ ողողիր, լուա բաժակի կամ դաւաթի ռնգները և ապա գործածիր:

Նետդ զպրոց տար քո բաժակը և մի թոյլ տար ուրիշներին, օգտուելու:

Մի խմիր այն ջուրը, որ կասկածելի գոյն կամ համ ունի, պղտոր է կամ հոտած:

Այն տեղերում, ուր խօլերա և տիֆ են պատահում, խմիր միայն եփ տուած ջուր:

Որպէսզի եփ տուած ջուրը համով լինի, կարելի է, նրան սառցնելուց չետոյ, մէջը քիչ կիտրոնի հիւթ աւելացնել:

Յուրա ջուր մի խմիր երբ շոգում ես:

Շատ մի խմիր ուտելու ժամանակ:

Մի խմիր մուգ թէյ կամ թուեղ սուրճ:

Կօնեակ, լիկիօր, ռօմ և ուրիշ ողելից խմիչքներ կարելի է գործածել միայն բժշկի թոյլտուութեամբ:

Գինուց աւելի շատ մարդիկ են մեռնում, քան խեղդում են ծովում:

Չափաւոր եղիր ուտելու և խմելու մէջ և դու մինչև խորին ձերութիւն կպահպանես առողջութիւնդ:

Մատաղ հասակից ծխելը վնասակար է:

Սովորաբար ծխելու առաջին փորձերին հետեւում են սրտախառնութիւններ:

Ծխախոտի թոյնին սովորած մարդիկ անգամ յաճախ հիւանդանում են ծխելուց:

Օղին ու ծխախոտը մարդուն շրմեցնում են, թող որ— չիմարացնում են:

Ընդհանուր առողջութեան համար, անհրաժեշտ է առողջ ատամներ ունենալ:

Մաքրիր ատամներդ, նրանց արանքները և զըլ-

խաւորապէս լինողերդ առանձին խնամքով, մանաւանդ երեկոնները:

Իրա համար գործածիր քչփորիչ, փափուկ փայտից, փետուր կամ մետաքսաթել:

Մաքրիր ատամներդ կակուղ խողանակով:

Ի հարկէ այդ խողանակը բացի քեղնից ոչ ոք չպէտք է գործածի:

Ատամները այսպէս պէտք է մաքրել՝ վերին ատամները՝ վերեւից ներքեւ, իսկ ներքեւիները՝ ներքեւից վերեւ, թէ ներսից և թէ դրսից:

Ապա մաքրիր խողանակով ատամներիդ այն մասը, որով կերակուրն ես ծամուծ:

Ջրով ողողիր մի քանի անգամ բերանդ ու ատամներդ. ջրի մէջ կարող ես աւելացնել, եթէ ցանկանում ես, քիչ կերակրի աղ կամ գտած սպիրտ:

Շատ չաւ կլինի եթէ ամեն անգամ ուտելուց չետոյ այդպէս մաքրես ատամներդ:

Յամենայն դէպս մի մոռանար՝ ամեն անգամ ուտելուց չետոյ մաքրել քչփորիչով ատամներդ և ողողել բերանդ:

Աշխատիր տարեկան ամենաքիչը մի անգամ ցոյց տալ ատամներդ ատամնարոյժին:

Երբէք մի կրծոտիր և ատամներով ամուր առարկաներ մի կոտրիր:

ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ.

Շնչիր քթով:

Շնչիր խորը կրծքով:

Որքան կարելի է շատ ման եկ բաց օդում, և շուտ-շուտ փոխիր այն սենեակի օդը, ուր ամենից շատ ես լինում:

Այդպիսով դու նորից չես ներշնչիլ քո արտաշնչումից արդէն փչացած օդը:

Առհասարակ, կարելոյն չափ, խուսափիր այն բնակարաններում մնալուց, ուր օդը ապականուած է:

Օդի մէջ փոշի մի բարձրացնիր:

Երբ տուն կամ դպրոցն ես մտնում, խնամքով մաքրիր կոշիկներիցդ փողոցային փոշին:

Մի թքիր չատակի վրայ:

Հաղալու ժամանակ թաշկինակդ բերանիդ բռնիր, հակառակ դէպքում ծածկիր բերանդ մեռքով:

Մրդերի մաշկն ու կորիզը, ուտելու ժամանակ, մի թքիր չատակին:

Մի խօսիր, երբ տաք բնակարանից չանկարծ ցուրտն ես զուրս դալիս, մանաւանդ այն դէպքում, երբ քիչ առաջ շատ խօսել կամ երգել ես:

ՇԱՐԺՈՒՄ.

Ազատ ժամանակդ աշխատիր որքան կարելի է շատ շարժուել:

Ատիճանաբար սովորեցրու քեզ աւելի և աւելի շարժումներ անելու:

Ճիզիքական վարժութիւններով պարսպիր արծակուրդներին և դասերից ազատ օրերին:

Շարժման պակասութիւնը հիւանդութիւն կարող է առաջ բերել:

Բայց չպէտք է մարմնավարժութիւնն էլ ի չարք գործ դնել:

Երբէք չպէտք է այնքան շարժուել, որ չողնածութեան հասնիս:

Մի պարապիր չողնեցնող մարմնամարզութեամբ անմիջապէս ճաշից յետոյ:

Մի քանի ֆիզիքական շարժումներ պահանջում են մորթու, շնչառութեան, արեան շրջանութեան և մարսողութեան լարուած գործունէութիւն: Իրանք են՝ սարերում զբօսնելը, շարժական խաղերը, բացօդեայ մարմնամարզութիւնը, այգում աշխատելը, լողալը, թիավարելը, չմշկելը (ոտաստահնակով արշաւելը), հեծանիւով դնալը և այլն:

Արեան սակաւութիւն, սրտի և այլ հիւանդութիւններ ունեցողները, միայն բժշկի թույլտուութեամբ կարող են պարապել այս անսակ ֆիզիքական վարժութիւններով:

Վերև թռած վարժութիւններից մի քանիսը՝ օրինակ հեծանիւ քշելը չարմար են միայն որոշ հասակի համար:

Լաւ չիշիբ հետեւելը՝

Երբ զբօսանքի կամ զիտական նպատակով ձեռնարկած ճանապարհորդութեան ժամանակ զնում ես երկաթուղով կամ շոգենաւով, կատարի՛ր այդ ճանապարհների յաղորդակցութեան վարչութեան բոլոր հրահանգները:

Մի պահիր զբպանումդ սուր և կտրող առար-

կաներ, երբ խաղում կամ վազվզում ես. (գրչածայրեր և այլն):

Երբէք մի խաղար հրազէններով:

Երբ լեռներում ես ման գալիս, լսիր փորձառու մարդկանց նախազգուշացումներին, որոնք այդ տեղերը աւելի լաւ են նանաչում:

Շատ մի մօտենար ժայռերի ծերպերին:

Երբ լողանում ես, մի անցկենար որոշեալ սահմանից (թոկերից և ցանցերից) դուրս, որոնցով լողանալու տեղը շրջապատուած է:

Եթէ մինչև անգամ լաւ լողացող ես, մի ցատկիր խոր տեղերը, որոնց յատակը չգիտես. այնտեղ քարեր, փթած գերաններ և շրաբոյսեր կարող են լինել, որոնք քեզ կրկաշկանդեն:

Մի քաշ աուր ուրիշներին չրի տակ, երբ նրանք այդ չեն ցանկանում:

Մի չմշկիր խոր գետերի և լճերի վրայ, եթէ հաստատապէս չգիտես ամուր և հաւասար հաստութեան է սառուցը թէ չէ, շատ հեշտ կարող ես հազիւ ծածկուած սառցալին բացուածքի մէջ գրլորուել:

Մի նստիր բաց տեղ ցրտում, երբ վաղելուց յետոյ քրտնել ես:

Մի զբօսնիր նաւակով, եթէ լաւ լողալ չգիտես:

Երբ զբօսում ես հեծանիւով, ընտրիր աներից հեռու ճանապարհները:

Մի հետեիր փոշի բարձրացնող կառքերին և սայլերին:

Ձառիվեր լեռնային ճանապարհը զգուշու թեամբ

բարձրացիր. քեզ մի յոգնեցրու և շատ արագ մի
բշիւ սարերուս:

Մի անիր այդ մինչև անգամ այն դէպքում,
երբ ընկերներդ են առաջարկում առաջկտրուկ բար-
ձրանալ:

Երբ սրտի բաբախումն ես, զգում, դանդաղ
բշիւ:

Քամու զէմ բշիւիս, կամ արագ գնացքի ժա-
մանակ, մի խօսակցիր:

Մի մոռանար, որ իւրաքանչիւր մարմնամար-
դութիւն կատարելիս պէտք է ուղիղ կանգնել, աչ-
սինքն կուրծքը դուրս զցած և մէջքը ուղղած:

Մ Ա Ր Թ Ո Ւ Խ Ն Ս Մ Ք.

Առողջ մարդուն վաննան (լողարանը) անպաշ-
ման օգտակար է:

Վաննա կարելի է ընդունել ուտելուց միայն
երկու ժամ չետոյ, ոչ վաղ: Կուշտ ստամոքսով լո-
ղանալը շատ վնասակար է:

Սմենաքիչը շարաթական մի անգամ վաննա
ընդունիր կամ բաղանիք գնա և լաւ լուա ամբողջ
մարմինդ օձարով:

Լուացուելուց չետոյ ողջ մարմինդ ու մաղե-
րդդ, որքան կարելի է, չոր սրբիր:

Եթէ վաննան տանը չես ընդունել և դուրսը
ցուրտ է, այդ դէպքում տուն դառնալիս լաւ փա-
թաթուիր:

Տարուայ շոգ ժամանակը, ինչքան կարող ես

չաճախ ընդունիր ցուրտ վաննա, եթէ կտրելի է,
մինչև անգամ ամեն օր: Այդ տեսակ լողանալը, պա-
հպանում է մարդու շահելութիւնը երկար տարիներ:

Մի լողանար, եթէ չուրը Յելլիւսի 18⁰ից
ցուրտ է:

Մի լողանար, երբ քեզ բոլորովին առողջ չես
զգում: (հողի, փորլուծութեան և այլ հիւանդու-
թիւնների ժամանակ):

Ջուր մի մանիր, երբ քրանած ես:

Եթէ չես շոգում, արագ սուզուիր ջրի մէջ և
շարժուիր, որքան կարելի է:

Մի նստիր ջրում, քանի սառնութիւն չես ըզ-
գում. 5-10 րոպէն կատարեալ բաւական է:

Սառը վաննայից չետոյ այնքան պիտի շար-
ժուես մինչև տաքանաս:

Երբէք մի մոռանար ընկուց առաջ տաք ջր-
րով ու օձարով լուանալ երեսդ, վիզդ, մեքերդ,
մաքրել ստամոքսիդ և ողողել բերանդ (երես 7),
իսկ առաւօտեան սառը ջրով շփել մարմինդ:

Աշխատիր սեփական երեսսրբիչ ունենալ, որ
բացի բեզինից ուրիշը չբանեցնի:

Սպիտակեղէնդ, որքան կարելի է շուտ-շուտ
փոխիր:

Եթէ հանգամանքները թույլ են տալիս, ամեն
օր՝ ցերեկը ջուկ, գիշերը ջուկ:

Մի նստիր միջանցիկ քամու առաջ, երբ շո-
գում ես:

Արաաքին մաքրութիւնը համապատասխանում
է ներքին հոգեկան սրբութեան:

ՏԵՍՈՂՈՒԹԻԻՆ ԵՒ ԼՍՈՂՈՒԹԻԻՆ.

Պահպանիր աչքերդ, մանաւանդ այն դէպքում երբ ստիպուած ես տանը երկար նայելու մանր առարկաների վրայ. օրինակ՝ կարդալու, գրելու, ձեռագործի ժամանակ և այլն:

Մի կարդար, մի գրիր և մի աշխատիր՝ մըթնում կամ երբ արեգակի լոյսը աշխատանքի վրայ է ընկած:

Գնալու, պառկած կամ ճաշելու ժամանակ:

Պարապմունքի համար այնպիսի մի անկիւն որոնիր, որտեղից, երևում է երկինքը:

Գրելու, նկարելու, կարելու ժամանակ լոյսը պէտք է ձախ կողմից ընկնի. (պատուհանը կամ ճրագը ձախ կողմը պէտք է լինեն):

Աշխատիր այնպէս նստել, որ սեփական շարքդ տեսարակի կամ գրքի վրան չընկնի և լոյսը չխանդարուի:

Գունատ թանաքով մի գրիր:

Երկար մի կարդար մանր տառերով տպուած գիրք:

Մի գրիր մանր տառերով և մի նկարիր անընդհատ երկար ժամանակ:

Չպէտք է, նոյնպէս, անընդհատ պարապել նուրբ կանացի ձեռագործով. նրանք վնասակար են աչքերին, մանաւանդ երբ գոյների զանազանութիւն չեն ներկայացնում. (օրինակ՝ սպիտակ յարթակարը սպիտակ Փօնի (տափ) վրայ:

Առնուազր 30 սանտիմետր հեռու ընդիր աչ-

քերիցդ զիրքը, տեսարակը կամ կարը, աւելի լաւ է եթէ բռնես մի կանդուն հեռաւորութեան վրայ:

Եթէ ինքդ կձռանաս այդ մասին, խնդրիր ծնողներիդ, որ նրանք չիշեցնեն բեզ:

Ակնոցներ մի գործածիր երբ կարիք չկայ:

Եթէ քեզ ակնոցներ են հարկաւոր, մի՛ գործածիր առանց բժշկի թոյլաւութեան:

Մի տրորիր աչքդ, եթէ բան է ընկել այնտեղ:

Սպասիր մինչև արցունքը նրան աչքի անկիւնը կքաշի. և եթէ ինքն իրան զուրս չեկաւ, դիմիր ակնարոյժին:

Ժամանակ առ ժամանակ մաքրիր ականջներումդ հաւաքուած նիւթը: Դրա համար սուր և հեշտ կտրատող առարկաներ մի գործածիր և առհասարակ խորը մի տանիր նրանց:

Խուսափիր շատ բարձր ու սուր ծայններից, նոյնպէս շատ սաստիկ լսողական գրգիռներից. օրինակ՝ թնդանօթի պայթիւնից և այլն:

Երբ լողանալիս ջուրն ես նետուում, աշխատիր ականջի վրա չնկնել:

Ցուրա ջրում լողանալիս ամենից լաւ է ականջները բամբակ խօթել. ջրասուզուելիս անհրաժեշտ է ականջները մատերով փակել:

Եթէ ականջդ սրեւէ միջատ մտնի, խնդրիր, որ մի քանի կաթիլ իւղ ամեն ականջդ:

Իսկ եթէ՛ որեւէ մեծ և ամուր բան ընկաւ, էլ մի՛ աշխատիր ինքդ հանելու, այլ իսկույն բժշկին դիմիր:

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԻՐԱՆ ՊԱՆԵԼ ՊԱՐԱՊՄՈՒՆ-
ՔԻ ԺԱՄԱՆԱԿ.

Աշխատիր որ աթոռն ու սեղանը յարմար լինին հասակիդ:

Այդ կարելի է իմանալ հետևեալ ձևով: Ուզիդ նստիր և ձեռքերդ ցած թող. եթէ սեղանի երեսի տախտակը արմունկիդ հետ հաւասար է, ուրեմըն սեղանը յարմար է հասակիդ:

Եթէ արմունկդ սեղանից ցածր է, այդ ժամանակ աթոռի վրայ տախտակ կամ հաստ դիրք դիր և սեղանը քեզ համար այնքան էլ բարձր չի լինի:

Աթոռի բարձրութիւնը այնպէս պէտք է լինի, որ ոտները ազատ գեանին չենուին:

Եթէ աթոռը շատ բարձր է, ոտերիդ տակ աթոռակ դիր:

Աթոռը պէտք է բաւականաչափ խոր նստարան ունենայ, որպէսզի կարելի լինի ուզիդ նստելով, մէջքը թիկն տալ աթոռի թիկնոցին:

Եթէ աթոռի նստարանը շատ է խոր, կոշտ բարձ դիր թիկնոցին կամ կախիր:

Մօտկացրու աթոռդ սեղանին կամ մինչև անգամ տակը քաշիր այնպէս, որ նստած ժամանակ իրանիդ և սեղանի մէջ մի քանի սանտիմետր տարածութիւն միայն մնայ:

Կուրծքդ սեղանին մի չենիր զրելու ժամանակ: Առաջ դցիր կուրծքդ և մէջքդ ուղղիր:

Մի ծալիր ոտերդ, մի ճօճիր նրանց օդի մէջ, ոտրդ օտովդ մի պցիր:

Գլխի և ձեռքերի դրութեան մասին հետևեալը միայ պահիր:

Գլուխդ քիչ խոնարհիր:

Արմունկներդ լայն մի չռիր. նրանց և իրանիդ մէջ միայն 4-5 մատնաչափ տարածութիւն պիտի լինի:

Ձեռքերդ սեղանի վրայ դրած ժամանակ բազկիդ միայն երկու երրորդ մասը պիտի գտնուի սեղանի վերայ:

Թերթի երեսը զրելիս, նրան քիչ-քիչ հեռացրու քեզնից:

Եթէ տետրակի տողերը շատ երկար են, նրան երբեմնապէս դէպի ձախ պէտք է հեռացնել, այնպէս որ նա մշտական առաջ գտնուի:

Մի դնիր դիրքը կամ տետրակը, որից արտագրուծ ես, տետրակիդ հետ մի շարքում ձախ կողմը, այլ տետրակիդ առաջ՝ ուղիղ քո դիմացը:

Գրելիս մատդ զրչածայրին շատ մօտ մի բռնիր:

Ցուցամատդ շատ քիչ կռացրու:

Եթէ նստելուց չոզնել ես, դիրքդ փոխիր, աւելի յարմար նստիր և հանգստացիր:

Եթէ կարդալ ես ուզում, նստիր թեք թիկնոց ունեցող աթոռի վրայ:

Այդ դէպքում, բռնիր դիրքը ձեռքումդ կամ, այն հեռաւորութեան վերայ պահիր, որը ցոյց է տրուած տեսողութեան վերաբերեալ զխոււմ:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԷՄ

Մի մտնիր այն սենեակը, ուր վարակիչ հիւանդ
կայ:

Մի մտնիր այն տունը ուր վարակիչ հիւան-
դութիւնից մեռած մարդու դիակ է դրուած:

Եթէ ինքդ՝ կամ ըռ տան անդամներից մէկը
վարակուած է հեշտ փոխուող հիւանդութեամբ,
կատարիր հետեւեալ խրատները:

Դպրոց մի յաճախիր:

Հիւր մի գնար:

Այգում կամ բակում ուրիշ երեխաների հետ
մի խաղար:

Վարակիչ հիւանդութիւններիով մենք այստեղ
զխաւորապէս հասկանում ենք՝ Սոււտ ծաղիկ, Քու-
թէշ (սկարլաաին), Բկացաւ (գիֆտերիա), Կարմր-
բուկ (կօր), Կապոյտ հաղ (կօկլիւշ): Մի բանի տե-
ղեր ճարակուած է աչքերի մի տեսակ հիւանդու-
թիւն—տրախօմա: Վարակիչ են նոյնպէս կարմրու-
կի մի տեսակը—հարսանիթ, ականջագեղձալին բոր-
բօքումը (սվինկա), արիւնային փորհարութիւնը,
բժաւոր տիֆը, ընդմիջուող տենդը և այլն,

Այստեսակ վարակիչ ախտերով չհիւանդանա-
լու համար, պէտք է պահել հետեւեալ նախազգու-
շութեան կանոնները:

Դիրք կամ տետրակ թերթիկս, մատով մի
զիպչիր լեզուիդ կամ շրթունքներիդ:

Ընկերներիդ զխարկը մի հագնիր:

Աչքակապուկ խաղալիս, մի՛ թոյլ տար աչքե-
րդ ուրիշի թաշկինակով կապելու:

Թաշկինակովդ մի՛ սրբիր ամեն մի փոշի և
կեղտ:

Մի համբուրուիր ուրիշների հետ:

Մի նստիր հազացող մարդկանց մօտ:

Մի՛ շոյիր կամ փայփայիր կենդանիներին:

Մի՛ քշփորիր մատով քթանցքներդ:

Մի ճանկուտիր եղունգներիդ, մարմնիդ վրայ
եղած բշտիկները:

Մի կրծիր եղունգներդ:

Եթէ դպրոցում քեզ լաւ չես զգում, իսկոյն
յաչտնիր դաստիարակին:

Առածն ասում է. «հիւանդութիւնը փթերով
ներս է մտնում, մսխալներով դուրս է գալիս»:

Դրա համար էլ ամեն կերպ պէտք է զգուշա-
նալ հիւանդանալուց:

Յ. Գ. Բացի այս կանոններից դու պէտք է գի-
տենաս թէ ինչ է Այկօհօլիզմը, Սիֆիլիսը և Թո-
քախոր:

Թող աշակերտների և աշակերտուհիների մէջ
կազմուեն ընկերական խմբակներ, որոնց նպատակը
լինի պարապել ինքնակրթութեամբ, ինքնազարգա-
ցողութեամբ և հիմնադրել փոքրիկ գրադարաններ:

Այս սուրբ գործի համար շատ աշխատանք է
հարկաւոր:

Խմբակներում ընթերտաներ կարդալը և մտքե-

րի փոխանակումը մեծ օգուտ կբերէ և պատճառ
կլինի դպրոցականներէ միացման:

Մենակ կորած կլինիս:

Անհրաժեշտ է միութիւն, որը կձառայէ յօ-
գուտ, ոչ թէ առանձին մի կուսակցութեան, այլ
ամբողջապէս յօգուտ աղատութեան շարժման, քա-
ղաքակրթութեան և վերջապէս ընդհանուր պրօ-
զրեաի:

Միութիւնը ոչ թէ է, իսկ ինչը որ բաժան բա-
ժան է, թող է և կռուի անընդունակ:

Քանի շատ լինեն մեր երկրում այս ոգով կրթ-
ութեամբ մարդիկ, այնքան աւելի արժան կ'լինի նոցա
ժողովրդին մատուցած օգնութիւնը և ժողովրդի
կեանքը աւելի կբարւորուի:

Այո, ժողովրդական լուսաւորութեան, կրթու-
թեան և ուսման գործը ոչ միայն դպրոցում,
այլ և դպրոցից դուրս, այսինքն, ընտանիքում, հա-
սարակութեան մէջ և այլն, ամենաբարձր նշանա-
կութիւնը պիտի ունենան:

1. Ամբողջ քաղաքակրթական լուսաւորու-
թեան գործի նպատակն է—մարդու կրթութիւնը
մարդասիրութեան զաղափարին համաձայն—ֆի-
զիքապէս ուժեղ և առողջ, մտաւորապէս լուսաւո-
րուած, բարոյականութեամբ և ընկերավարական գա-
ղափարով հասարակութեան և մայրենի ժողովրդի
մէջ ապրելու պատրաստականութեամբ:

2. Լուսաւորութիւնը, ժողովրդական կեանքի
ինքնուրոյն մի մասը լինելով—պիտի սորա ազա-
տութեան պաշտպան լինել, մանաւանդ, իհարկէ,

դպրոցի լիովին աղատութեան, եկեղեցու իշխանու-
թիւնից և մանաւանդ կարելոյն չափ ազատ պա-
հել պետական իշխանութիւնից: Ամենուրեք ուսուծը
ձրի և պարտադիր պէտք է լինի:

3. Դպրոցական և միւս կրթական-ուսուծնա-
կան հիմնարկութեանց գործի գուտ լուսաւորական,
այսինքն, ուսման և կրթական մասը պիտի չան-
ձուռի նոյն լուսաւորութեան գործիչներին ուսու-
ցիչներին, որոնք կազմակերպուած են և ներկայաց-
նում ընտրական դպրոցական խորհուրդ:

4. Անհրաժեշտ է իրագործել դպրոցների ազ-
գայնութիւնը, (նացիօնալիզացիա), այսինքն մայրենի
լեզուով ուսանելը: Պէտք է արժանաւոր աեղ տալ
ոուսաց լեզւին և ընդհանուր հայրենիքի ուսուծնա-
սիրութեանը:

5. Ընտանեկան կրթութեան կարևորութիւնը
առաջ է բերում ընտանիքի և դպրոցի մտերմու-
թեան խնդիրը, որը պահանջում է ծնողների խրմ-
բակներով միութիւնը դպրոցական գործերում մաս-
նակցելու իրաւունքով:

6. Իրրև հերթական հարց պիտի դրուի— կեան-
քի մէջ մտցնելու դպրոցի միաւորութեան հարցը,
մանաւանդ հանրակրթական դպրոցի բոլոր երեք
աստիճանների միաւորութիւնը՝ ստորին, միջնա-
կարգ և բարձրագոյն, այսինքն, ստորին դպրոցից
բարձրագոյնն անցնելու համար. անպատճառ, որ
մեզ համար առանձնապէս կարևոր է պիտի և ու-
րիշ մասնազիտական դպրոցներ լինեն՝ երկրագոր-
ծական, արուեստազիտական, և այլն.




7. Կանանց ուսումը պիտի հաւասարուի տղա-
մարդկանց հետ և սկզբունքով պիտի թույլ տալ
միատեղ ուսումը ամեն տեսակ և ամեն աստիճանի
դպրոցներում:

8. Լուրջ ուշադրութիւն պիտի դարձնել ֆի-
զիքական և մտաւոր կրթութեան վրայ ոչ միայն
կեանքի համար անհրաժեշտ հարուստ չիշողութեան,
այլև դատողութեան ընդունակութեան և խելքի
զարգացման համար. կրօնի, գլխաւորապէս բարո-
յականութեան վրայ, սրտի ազնուացնելու, կամքի
պնդութեան և վերջապէս, զինւորագրութեան մեծ
նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը—ամեն մի
քաղաքացու սուրբ պարտականութիւնը ներշնչել:

9. Ժողովրդի խաւերի մէջ կրթութիւն ու
զարգացում տարածելու համար անհրաժեշտ են
զրադարան-ընթերցարաններ, ժողովրդական դա-
սախօսութիւններ, կիրակնօրեայ դպրոցներ, երե-
կոյեան կուրսեր հասակաւորների ու մանաւանդ
աշխատաւոր դասակարգի համար, էժանագին թատ-
րոնական ներկայացումներ, գիտութեան բոլոր ծիւ-
ղերին վերաբերեալ, ժողովրդական զբոսայգիների շա-
ջորդարար հրատարակութիւններ և այլն:

Ժողովրդին անհրաժեշտ է լուսաւորութիւն
և կրթութիւն, մեր ազգային և քաղաքակրթական
ապագան սորանով կապահովեցնես. թող այս բեզ
համար սուրբ լինի:

Բժ. Ս. Բ.



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ-
ԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԻԵԱԼ ՊԱՏԿԵ-
ՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Բեօրնսօն' կազմեց Ե. Թովչեան	104
2. Մահմէդ,	7,,
3. Մեօրոպ' Մաշտոց' կազմեց Ե. Թ.	5,,
4. Սահակ Պարթև'	5,,
5. Հաուպոման'	15,,
6. Մեծն Ներսես'	5,,
7. Զրադաշտ' կազմեց Մ. Թամաճեան	7,,
նտրութիւն կաթնատուներէ (26 պատկ.) Գ. Մեծատուրեանի	15,,
9. Թ. Վերխով կազ. բժ. Ս. Բուդուղեան	25,,

Պատրաստ է տպագրութեան համար՝
Ա. Քալանթարի.—Հանրամատչելի ձեռնարկ կաթ-
նատնտեսութեան:



Լոյս տեսաւ Ե. Թովչեանի «ԼՈՅՍ» պատկերա-
զարդ օրացոյցները 1906. թ. (զրպանի և պա-
տի):

Իիմէլ՝ Թիֆլիս Մաղաթովսկայա 5. Ե. Թովչեան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0279118

ԲԺ. Ա. ԲՈՒԳՈՐԴԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒԳՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ.)	5 4
2. Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3. Ինչ է սիֆիլիսը	5 »
4. Առողջապահական զրոյցներ	5 »
5. Ինչ է ժուժկալութիւնը	5 »
6. Ինչ է անառակութիւնը	5 »
7. Վենեքական ախտեր	5 »
8. Աշակերտի առողջապահութիւն.	2 »
9. Մեր նեարդերը	10 »
10. Սիֆիլիս (բարեխոսուած)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10 »
12. Գեղձախտ (զօլօտուխտ)	10 »
13. Ո՞վ է յանցաւորը	15 »
14. Կարիք և բարեգործութիւն.	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ	15 »
17. Մարմնամազրդութիւն (25 պատկերով)	20 »
18. Առողջապահական նուէր նորասի կանանց	20 »
19. Կինը և տղամարդը	15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
21. Ինչ է կաշու հիւանդութիւնը.	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն.	15 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի)	20 »
25. Ստամոքսի կատարը	20 »
26. Քուն և երագ (մի պատկերով)	25 »
Մեծագիր պատկեր «Քուն և երագ» առանձին	10 »
27. Գործարան թէ երկրագործութիւն.	15 »
28. Մնապաշտութիւն ու կախարդութիւն	20 »
29. Մտերմական խորհրդ. պատանիներին (օնանիզմ)	20 »
30. Գոյութեան կռիւ	20 »
31. ՌուզօյլՖ Վիրսով	25 »
32. Սէր և Իւնդ (մի պատկերով)	20 »
33. Անառակութիւն և պոռնկութիւն	20 »
34. Նուէր հայ զինւորին	20 »
35. Նուէր հայ վարժապետին (դպրոցական առողջապահութիւն):	20 »
36. Նուէր հայ դպրոցականին (Մեր օրերը)	10 »

Գրինք է 10 կողմ.

Դ Ի Մ Ե Լ՝ Թիֆլիս Կենդրոնական և Գուտտենբերգ
Գրավանառանոցները.

Պահեստը գտնուում է Պետերբուրգ

«Պուշկինեան արագատիպ» Լեշտուկով փ. տ. 4.